Գ. ՏԱՐԻ ԹԻՒ 655 — ԵՐԵՔՇԱԲԹԻ 11 ՄԱՐՏ 1886 (Ն. Տ.) 23 ՄԱՐՏ 1886 — 17 ՁԷՄԱԶԻ ԻԻԼ ԱԽՐ 1303

40 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՈՐԾԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ,
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ-Ի ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ԳԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	դահեկան արժէք	200
» »	Վեցամսեայ	» »	100
» »	Եռամսեայ	» »	50
Գաւառաց »	եւ տեղական Թղթատարով տարեկան	» »	240
Գաւառաց համար եւ տեղական Թղթատարով վեցամսեայ		» »	120
Օտար երկիրներ, տարեկան		Ֆրանք	56
» »	վեցամսեայ	»	28

Դուրս զրկուած լրագրաց հասցէաւ ծախքը Տնօրէնութեան վրայ է։ Խմբագրութեան զրկուած նամակ կամ գրութիւն ետ չդարձուի։

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deïrmen Han Constantinople.

Կ. ՊՈԼԻՍ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 10 ՄԱՐՏ, 1886

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԻԱՑԻՆ ԱՄՊԱՐԻԶՆ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ

Ադրիանոպէս.— Հայ Շոգենաւային Ընկերութեան մը գաղափարը.—Հայ Վաճառականութեան և Հայ Արհեստագործութեան համար այս գաղափարին նշանակութիւնը.— Հայ նաւատեարը.— Հնդկաստանի Հայք.—Ցոյն նաւատեարը.—Տնտեսական տարուութիւն։

Անցեալ յարթիս մէջ լուր մը տուինք, որուն բնին վաճառականութեան և բնիկ արհեստագործութեան տեսակէտով կարեւորութիւնն աչքէ չի կրնար վրիպիլ։ Մեր հրապարակէն երեւելի Հայ սեղանաւորական Տուն մը գնած է անգլիական շոգենաւ մը, հանքածուխ, երկաթ և արմտիք փոխադրելու ընդմէջ Անգլիոյ, Կ. Պոլսոյ և Սեւ Ծովու նաւահանգստաց, թէ՛ իւր հաշուոյն և թէ՛ ուրիշ Վաճառատանց հաշուոյն։ Խօսք կայ թէ, Կ. Պոլսոյ Հայ գործատէր դասուն համար այս նոր ձեռնարկութիւն սկզբնաւորութիւն մ'է տակաւին, և թէ կարելի է որ աւելի կամ նուազ մօտաւոր ապագայի մը մէջ ուրիշ շոգենաւեր գան միանալ Ադրիանոպէի հետ, Հայ վաճառականութեան մի մեծ պէտքը լրացնելու համար, տալով ա նոր Հայ Շոգենաւային Ընկերութեան մը աշակցութիւն։

Աւասիկ նոր ասպարէզ մը, ուր Հայ գործունէութեան և Հայ ճարտարութեան փայլիւք տեսնել մեծ ուրախութիւն կը պատճառէ ամէն Հայու և ամէն Թուրքիացւոյ։ Նաւային ասպարէզը թէ՛ վաճառականութիւն մ'է և թէ՛ արուեստ մ'է, և այս կրկին նկատմամբ շատ շահաւոր և շատ պատուաւոր ճիւղ մ'է գործունէութեան։ Հայք լոկ ցամաքային ժողովուրդ մը չեն, և կ'արժէ որ նեռուին նաւային ասպարէզին մէջ ալ։ Թուրքերը ցամաքային ժողովուրդ մը կը համարուին։ բայց Սեւ Ծովու եղերաց Լազերը ընտիր նաւաղներ և նաւապետներ կուտան օսմ. վաճառական և պետական նաւատորմին։ Վանայ Ծովը և Սեւանայ և Որմիոյ լիճերն Հայաստանի Հայոց աչքը բաւական վարժեցուցած են Ծովու։ Այս Ծովակներու վրայ բանող առագաստանաւը գրեթէ ամբողջովին Հայոց ձեռքն են։ Բայց Սեւ Ծովու, Մարմարայի և Ցոնական Ծովու եղերաց Հայ գաղթականութիւնը Հայաստանի Հայոցմէն առաւել եւս վարժ են Ծովու, և Ալիշանն Հայաստանի Հայոցմէն շատ աւելի յառաջ երթալ նաւային ասպարէզին մէջ։ Բաղ նաւավարներ ունեցող ժողովուրդ մը կրնայ քաղ նաւաղներ ալ հայցնել, և քաղ նաւաղներ ունեցող ժողովուրդ մը կրնայ վարպետ նաւապետներ արտադրել։ Եւ Հայ նաւավարաց քաջութիւնն առակի կարգ անցած է, գէթ ի Կ. Պոլիս։ Այս նաւավարներէ ոմանք այժմ կը բանին առագաստանաւուց մէջ, և քանի մը առագաստանաւք Հայ նաւապետներ ունին։ Բայց ասկէ անդին չեն կրնար երթալ Հայ նաւաղք։ զի ծովային վաճառականութիւնն Ցունաց և Եւրոպացւոց ձեռքն է բոլորովին, որք իրենց աղգակիցները միայն յառաջ կը քաշեն։ Հողագործութեան, վաճառականութեան և արհեստագործութեան մէջ այս երկրի ուրիշ ցեղերէն ետ չմնալը նկատելով, պատճառ մը չկայ որ նաւային արհեստին մէջ բոլորովին ետ մնայ Հայն, եթէ միայն գտնէ կռուան մը որոյ վրայ կարենայ տակաւ զարգանալ այս նոր ասպարէզի մէջ։ Եւ Հայ նաւատեարք շատ դիւրաւ կրնան ընձեռել զայն կռուան։ Հայկական շոգենաւու մը կամ առագաստանաւու մը մէջ պատճառ չկայ որ չընդունուին Հայ նաւաղներ, Հայ մեքենավարներ և մինչեւ իսկ Հայ նաւապետցուներ, աշակերտելով յառաջ երթալու համար։ Ամենայն անկողմնակալութեամբ հանդերձ, մեք ա՛ինչափ հաւատք ունինք Հայ ցեղին ֆիզիքական և մտային ձեռքերուն վրայ, որ բնաւ չենք տարակուսիր թէ մերազնեայք նաւային արհեստին մէջ ալ կը յաջողին, և քաջ, ճարպիկ և վստահելի նաւային մարդիկ կը դառնան, եթէ միայն պատեհութիւն գտնեն, յորմէ ցարդ զուրկ մնացած են ընդհանրապէս։ Եւ եթէ Ադրիանոպէսի Թիւրք շատոնց, սոյնպիսի պատեհութիւն մը շատ լաւ կ'ընծայուի մերազնէից, ապացուցանելու համար թէ, զ'իւր օրդան Վանայ Ծովուն և Եփրատայ ու Երասխայ եղերաց վրայ ունեցող ցեղ մը չի կրնար ցմիչտ հեռի մնալ ծովային ասպարէզէն։

* * *

Բայց, ըսինք, ո՛չ միայն արհեստ մ'է, այլ նաեւ վաճառականութիւն մ'է նաւային ասպարէզն։ Եւ գուցէ վաճառականութեան ամենէն ընդարձակ, ամենէն անսահման և ամենէն փառաւոր ճիւղն է՝ վաճառքներն աշխարհի մէկ անկիւնէն ուրիշ մէկ հեռաւոր անկիւնը փոխադրելու գործն, որուն անհրաժեշտելի ծաւալ մը տրուած է շոգեշարժ մեքենայն։ Լոյսի, Բիւնարտի, Մէսաժբրիի և այլ այսպիսի ընկերութիւնը, իբրեւ լոկ առեւտրական գործ, աշխարհի ամենամեծ ձեռնարկութեանց կարգին մէջ են։ Եւ բնական կամ դրական ինչ մասնաւոր պատճառ կայ որ Հայք գլխովին անմասն մնան այս մեծ շահագործութեան մէջ։ Արևմտեան Եւրոպոյ և Թուրքիոյ նաւահանգստաց միջեւ միայն հայ վաճառականաց ներծութեանց և արտածութեանց փոխադրումը պիտի բաւէր ապրեցնելու կարգ մը շոգենաւեր։ Սակայն մինչեւ ցարդ հայ դրամատէրք, ձեռներիցութիւնն այսչափ յառաջ տանելու ո՛չ պէտքն ի՛նկատառած են, ո՛չ կարելութիւնը։ Բայց այսիրողութիւն միայն Թուրքիոյ Հայ վաճառականաց համար ստոյգ է։ Հնդկաստանի հայ վաճառականք տարբեր խորհած են, և զղջալու պատճառ չեն ունեցած բնաւ։ Հանգուցեալ Սեթի Աբգարի երէց եղբօր՝ Յարութիւն Աբգարի՝ նախաձեռնութեամբ բազում տարիներէ հետէ հիմնեալ կայ «Աբգարեան Շոգենաւային Ընկերութիւն» մը, որ քանի մը մեծ շոգենաւեր կը բանեցնէ Հնդկաստանի և Անգլիոյ նաւահանգստաց միջեւ։ Հնդկաստանի Հայոց վաճառականութիւնն հիմնած և ի սկզբան պահպանած է զայս Ընկերութիւն, որ ընդհանուր վաճառականութեան օգտակար հանդիսանալով, կը ընդունուի և զորանալ և ամրապնդիլ։ Բայց չենք կարծեր թէ Հնդկաստանի Հայոց վաճառականութեան համագումարը Թուրքիոյ Հայոց վաճառականութեան համագումարէն բարձր լինի։ Հնդկաստանի Հայք հիմա չունին առաջուան ո՛չ բազմութիւնն, ո՛չ հարստութիւնն, ո՛չ ալ հայութիւնն, և Թուրքիոյ վաճառականութիւնն այժմ ո՛րչափ ալ անկեալ համարուի, Թուրքիոյ հայ վաճառականք իրենց ամբողջութեամբ անշուշտ աւելի գործ կ'ընեն այսօր քան Հնդկաստանի նախկին հայ վաճառականութեան արդի նուազեալ ներկայացուցիչներն։ Եւ եթէ այս վերջինք կրցած են յառաջ բերել «Աբգարեան Շոգենաւային Ընկերութիւն» մը, չենք տեսներ բնական կամ դրական արգելք մը, որ օր մը Թուրքիոյ մէջ ալ հայկական շոգենաւային ընկերութեան մը հաստատումն անհնար գործէ։

* * *

Կը կարծենք թէ ինքնասիրութիւնն, ո՛չ նուազ քան շահու օրինաւոր ակնկալութիւնը, պարտէր մղել մեր դրամատէրները, մեր սեղանաւորներն և մեր վաճառականները՝ միանալու և հայկական այնպիսի ընկերութիւն մը հիմնելու։ Կ'ըսուի թէ «հայ վաճառականք զիրար չեն քաշեր», և եթէ անոնց մին փայլուն գաղափար մը յղանայ, այլք չեն նպաստեր իրագործման, և ընդհակառակն կը խափանեն։ Բայց եթէ այս կարգի ձեռնարկութեանց մէջ եռասիրութիւնը կը մտնէ երբէք, հայ վաճառականք ո՛չ թէ իրարու պէտք է նախանձին, այլ իրենց այն հզօր մրցակիցներուն, որք թէ՛ վաճառականութիւնն և թէ՛ սեղանաւորութիւնն իրենց ձեռքէն բոլորովին խլել կը ջանան։ Գործոց արդի վիճակին մէջ, ո՛չ թէ հայ վաճառականն այլ յոյն վաճառականն է որ կրնայ հայ վաճառականի մը նախանձը շարժել։ Պ. Բարաեանի յոյն շոգենաւատերը խոնարհ սկզբնաւորութիւն մ'ըրաւ։ բայց այսօր Անգլիոյ և Կ. Պոլսոյ նաւահանգստաց միջեւ բանող լաւագոյն շոգենաւերէն մի քանին իւրն է, և իւր դիրքն հարստութեան մէջ հայ վաճառականաց հատուցած տուրքը բաւական տեղ մը կը բռնէ։ Պ. Վալիանոյի Տունն իրեն յատուկ շոգենաւեր կը բանեցնէ, և Կ. Պոլսոյ և Կրետէի, Կիպրոսի և այլ յունական կղզեաց վաճառականութիւնը մեծ մասամբ Պ. Քուրծիի յունական շոգենաւը կը փոխադրէն։ եթէ բան մը կրնայ դրդռել հայ վաճառականաց ինքնասիրութիւնն, իրենց յոյն մրցակցաց այս զարմանալի յաջողութիւնը պէտք է լինին այն։ Հեռո՛ի մէնջ արծարծել նախանձու ոգին ի մէջ ազնուական հայրենակից ժողովրդոց ի Թուրքիա։ Բայց մրցման դովելի ոգին հրաշքներ գործած է ցարդ, եւ եթէ Կ. Պոլսոյ և Իզմիրի հայ դրամատէր և գործատէր դասը փորձէ մրցիլ յոյն դրամատէր և գործատէր դասուն դէմ, ո՛չ ոք կրնայ գուշակել թէ ո՛րչափ լաւ արդիւնքներ յառաջ չգիտի գան։

Արդի ժամանակիս մէջ մեծ դրամագլխով կատարուած գործերն են ամենէն շահաւոր գործերն։ Համանման օրինօք որով՝ բնութեան մէջ՝ մեծ կենդանիք փոքրիկները կուլ կուտան, եւ քաղաքականութեան մէջ՝ մեծ Տէրութիւնք փոքրիկներն իրենց հետ ձուլել կը ճգնին, շահագործութեան մէջ ալ մեծ դրամագլուխք փոքրիկները կ'անհետացուցանեն, կամ իրենց հետ կը միացնեն տակաւ առ տակաւ։ Շոգենաւային ձեռնարկ մը էապէս մին է այն ձեռնարկներէ, որք յա՛նժամ եւեթ վստահութիւն կը ներշնչեն և յաջողութեան ապահովութիւն կրնան գտնել, երբ մեծ դրամագլխով կը հաստատուին։ Հեռուագրով, չենք կարծեր թէ այժմ միայն մէկ մասնաւոր Տուն կարենայ բազմաթիւ շոգենաւեր բանեցնել և Մայրաքաղաքիս վաճառականութիւնն յաջողակել այն զօրաւոր Շոգենաւային Ընկերութեանց ձեռքէն, որք կերպով մը իրենց մենաշնորհը դարձուցած են զայն։ Ուշ կամ կանուխ, եթէ հայկական շոգենաւեր պիտի ունենանք, ամենէն աւելի հաւանականն այն է թէ Հայկական Ընկերութեան մը ձեռամբ պիտի ունենանք զայնս, և շատ ուրախ պիտի լինինք եթէ կարենանք ծանուցանել այսպիսի Ընկերութեան մը կազմութիւն։ Ուրախ պիտի լինինք իբրեւ Հայ. զի նաւային ասպարէզը մեր երիտասարդութեան առջեւ նոր դաշտ մը կը բանայ գործունէութեան, և մեր չափահաս սերընդեան համար՝ նոր աղբիւր մը շահագործութեան։ Դարոցէ ելնող և վաճառատան մը դրադրութիւնն իբրեւ կրթութեան գերագոյն նպատակէ՝ նկատող հայ պատանին ու երիտասարդը իրենց գործունէութիւնն ուղղանդն ի հանդէս բերելու նոր միջոց մը կ'ունենան, եթէ գիտնան թէ, նաւային վարժարանի մ'ընթացքէ հետուելէ յետոյ, կարող պիտի լինին իբրեւ նաւային մարդիկ ազդուստ ունենալ։(*) Շահագործութեան արդի ճիւղերու մէջ շատ շահ չընող մեր դրամագլխոց համար ալ նոր ճամբայ մը կը բացուի, շահու, եթէ հայ դրամագլուխներ սկսին գործածուիլ ծովային վաճառականութեան։ Բայց մեք ուրախ պիտի լինինք նաև իբրեւ Թուրքիացի և իբրեւ Օսմանեան հպատակ. զի բնիկ տարբերէ կազմեալ շոգենաւային ընկերութիւն մը մեր երկրին համար տնտեսական նոր ոյժ մը կը դառնայ, և նոր ձեռնարկ մը՝ Թուրքիոյ տնտեսական աղատագրութեան ճամբուն մէջ։ Բաւ չէ՞ արդեօք որ, եւրոպական քաղաքակրթութեան հետ յարաբերութեան մտնելէ ի վեր, ճարտարութեան ամէն ճիւղերուն մէջ հարկատու կը մնանք Եւրոպոյ։ Տէրութեան այժմեան աշխարհավարք, գնահատելի հայրենասիրութեամբ մը, փափաքող են երկիրն ազատել այս տնտեսական ստրկութեան վիճակէն, և տրամադրութիւն կը ցուցնեն ամէն դիւրութիւն ընձեռելու բնիկ ճարտարութեան զարգացման։ Եւ Հայ Շոգենաւային Ընկերութիւն մը, եթէ երբեք գոյութիւն ստանայ, մեր բնիկ ճարտարութեան զարգացման առաջին քայլերէն մին կը հանդիսանայ։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆՆ ԵՒ ՁՕՀՐԱՊԵԱՆ ՀԱՅ ԴԵՐԴԱՍՏԱՆԸ

Մեր մարտ 1 թուով յիշուած էր թէ Մայրաքաղաքիս անգլիական նոր դեսպան Սըր Էտուարտ Թորնթն ազգականութիւն ունի Ձօհրապեան հայ դերդաստանին հետ։ Աւարկի այս մասին քանի մը նոր տեղեկութիւնք։ Ձօհրապեան դերդաստանին մէկ անդամը 40 տարի յառաջ հեղինակած է անգամէն առաջին գիրքը Թուրքիոյ վրայ, որ շատ ընդունելութիւն գտած է։ Նոյն դերդաստանի մէկ այլ անդամն անգլ. հիւպատոս եղած է ի Կարին, և մէկուրիշ անդամն այսօր Եգիպտոսի գլխաւորական ծառայութեան մէջ է, կարծենք գնդապետի աստիճանաւ։ Նոյն դերդաստանէն բժիշկ Տր. Ձօհրապ անցեալ տարի վախճանած էր ի Կ. Պոլիս, և վերջապէս, երիտասարդ փաստաբան Ձօհրապ էֆէնտի նոյն դերդաստանի մէկ անդամն է։ Արդ, Մայրաքաղաքիս անգլիական դեսպանատան բաղաքական Թարգման Սըր Ալֆրէտ Սանտիսընի մայրն, որ կենդանի է, Ձօհրապեան հայ դերդաստանին պատկանող օրիորդ մ'էր, երբ հանգուցեալ Պ. Սանտիսընի հետ ամուսնացաւ։ Եւ Սըր Ալֆրէտի մայրն և Սըր Էտուարտ Թորնթըն մօրեղբայրանութիւն ունին և իրբեւ քոյրն կը յիշուին։ — Սըր Ալֆրէտ Սանտիսընն, մօր կողմէ հայ արիւն կրելէն զատ, իւր կինն ալ, ծընեալ Օր. Սամալեանեան, Հայուհի մ'է։—Ձօհրապեան դերդաստանին մէկ մասը լուսաւորչական մնացած է, մաս մը բողոքական եղած է, մաս մ'ալ կաթոլիկ։

(*) Խմաց կը տրուի մեզ թէ, Ադրիանոպէսի շոգենաւուն երրորդ նաւապետն Հայ մ'է, ինչպէս նաեւ երրորդ մեքենավարը։

ԿՐԵՏԷ. Մարտ 10ին, Ռուսիոյ Կայսեր անուան տօնախմբութեան առթիւ, ի Սուտա Տէֆթրէ-Տոսէյ անուն ռուսական մարտանաւուն մէջ գոհաբանական պաշտօն մատուցուեցաւ։ Անգլիոյ նաւատորմին հրամանատար և Ռուսիոյ Կայսեր քեռայր Էտիմպուրկի Դուքսը ներկայ էր կրօնային արարողութեան։ Կէս օրին բոլոր նաւախումբք գեղեցկապէս զարդարեցան դրօշներով, ամենքը միասին թնդանօթի արձակելով իբրեւ ողջոյն առ ռուսական դրօշ։ Յետ կրօնային պաշտամանն, Էտինպուրկի Դուքսն հրաւիրեցաւ ի ճաշ Քաղաքագլխի ռուս ծովակալին կողմէ, և նոյն երեկոյ ռուս ծովակալը ճաշեց անգլ. Աղեքսանդրա զրահաւորին մէջ Էտինպուրկի Դքսին հետ։

ՍՈՒՏԱՆ. Օսման Տիկմա գործունէութիւն կը ցուցնէ Սուաքինի կողմէ։ Մարտ 15ին բաւական զօրութեամբ յարձակեցաւ Սուաքինի կողմէ, զոր կը պաշտպանեն անգլիացի և եգիպտացի զօրքեր, ալակցութեամբ այն «բարեկամ Արաբներու» որք հաշտ են հաստատեալ իշխանութեան հետ և չեն յարած ապստամբներուն։ 370 բարեկամ Արաբք խոտ փնտռելէ դացած էին ի հաշին, երբ յարձակում կրեցին ապստամբներէն, որք բաւական կռուելէ յետոյ, ետ դարձան, և նոր ոյժերով ստուարացած, կրկնեցին յարձակումը։ Բարեկամ Արաբք այս անգամ յաղթուելու վրայ էին, երբ Սըր Զարլզ Ուօրբնոր Սուաքինէ կը դիտէր գործը, փութաց անգլօ-հնդիկ զօրքեր ճամբեց, որք երեք ժամու կռուէ մը յետոյ, ի փախուստ դարձուցին Օսման Տիկմայի մարդիկը։ Սոքա իրը 300 մեռեալ և վիրաւորեալ թողուցին պատերազմի դաշտին վրայ, և բարեկամ Արաբք և Անգլիացիք դրաւեցին շատ մը ուղտեր, դուարներ, թնդանօթ մը, երկու մնտուկ ռազմամթերք և այլ զինուորական պիտոյք։ Սըր Զարլզ Ուօրբրն բանախօսութեամբ մը դրուատեց իւր Պէտէվի դաշնակցաց ցոյց տուած քաջութիւնը։

ՑՈՒՆԱՍՏԱՆ. Օսէյսէ կը հեռագրուի մարտ 12ին. Տեղւոյս երեւելի Ցոյնք, որք շարունակ յարաբերութեան մէջ են Աֆէնտիի հետ, կը հաստատեն թէ իրենց հարազնակցաց ընդդիմութիւնը Մեծ Տէրութեանց յորդորներուն՝ շատ չանցած վերջ պիտի դանէ։ Հարկ դատուած էր այսչափ ընդդիմութեամբ մը համոզել թէ՝ հելլէն ժողովուրդն և թէ՝ դրացի ազգերը թէ, Ցունաստան հաստատ համոզմամբ նեռուած է այս պայքարին մէջ՝ նուիրական իրաւունքներ փրկելու համար։ Բայց երբ Տէրութիւնք հելլենական ցուրց մէջ Նաւային Ցոյցի մը ձեռնարկելով ճնշում մ'ի գործ դընել կը պատրաստուին, Հելլէնք առանց պատուոյ ազգասէր միրաստանելու կրնան հրաժարիլ յարձակողական ընթացքէ մը։ Բայց Հելլէնք կ'ըսեն թէ այսու հելլենական խնդիրը չի փակուիր, այլ պարզապէս կը յետաձգուի, պատեհ առթիւ վերստին յուղուելու համար։ զի Հելլէնք չեն դադրիր իրաւացի նկատելէ ինչ որ իրենց ազգային դատը կամ Հելլենութեան սահմանքը կը համարին։ Ռուսիարնակ Ցունաց զայրոյթը բաւական իջած է յորմէ հետէ Ռուսիա համակրութեան նշաններ տուաւ Ցունաստանի, և խոստումներ՝ ապագայ աջակցութեան հելլենական դատին։»

—)(58)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻԼ ՎԷՐՆ

ՄԱԹԻԱՍ ՍԱՆՏՈՐՖ

ԹԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ա.

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ

Սակայն եկած էր վերջապէս ժամն, ուր Տոքթորը պիտի կրնար սկսիլ գիւղաւրին ձեռնարկ։ Վստահ լինելով որ իւր հընդեռաստանաւեայ բացակայութենէն յետոյ չէր կրնար ճանչուիլ, որովհետեւ մեռած կը կարծէին զինքը, Բարուղ եկաւ։ Եւ յոյժ դիպող ժամուն եկաւ, Ստեփան Պաթորիի որդին և Սիլաս Թորնթալի դուստրը միացած գտնել այնպիսի սիրով մը, զոր անպատճառ ջանջնջել պէտք էր։

Ընթերցողք չեն մոռցած Սարքանիի միջամտութիւնն, ինչպէս նաև այն հեռեւանքներն որ ունեցաւ երկու կողմէ, Պետրոս Պաթորիի մահաբերձ վիճակի մէջ իւր մօր տունը բերուիլն և Տոքթոր Անթէքիրթի ըրածներն, այն է վիրաւորեալ երիտասարդը թմրեցնելով իւր մեռեալ դագաղին մէջ զետեղելն և ապա արթնցնելով իւր իսկական Մաթիաս Սանտորֆի անունն անոր յայտնելն։

Այժմ պէտք էր բուժել զայն և չգիտցածներն խնցնել նմա, այսինքն թէ նոր կալի դաւաճանութիւն մը մտածած էր իւր հայրն և նորա երկու ընկերները. պէտք էր ըսել իրեն ո՛յք էին դաւաճանները։ Պէտք էր վերջապէս ընկերացնել զինքն այն անողոք արդարութեան դործին, զոր Տոքթորը կ'ուզէր կատարել արտաքոյ մարդկային արդարութեան, որում ինքը զոհ եղած էր։

Ուրեմն, ամէն բանէ առաջ Պետրոս Պաթորիի բուժումը պէտք էր, հետեւաբար հարկ էր ինքզինքը բովանդակապէս այդ գործին նուիրել։

Կզզին փոխագրուելէն յետոյ մինչեւ ութ օր Պետրոս կենաց և մահու միջեւ կը տատանէր։ Սավայի յիշատակը, զոր այժմ ամուսնացած կը կարծէր Սարքանիի հետ, իւր սգագեաց մոր յիշատակն, և հուսկ ուրեմն Մաթիաս Սանտորֆի կոմսին այս անակնկալ յարութիւնը Տոքթոր Անթէքիրթի ծածկանուան տակ, Մաթիաս Սանտորֆի կոմսին, իւր հօր ամենէն անձնուէր բարեկամին, այս ամենայն կրնային հարկաւ չփոթել արդէն վրդովեալ հոգի մը։

Տոքթոր Անթէքիրթ տիւ և գիշեր չմեկնեցաւ Պետրոսի քովէն։ Լսեց որ երիտասարդն, իւր զառանցանաց մէջ, Սավա Թորնթալի անունը կը յեղյեղէր։ Հաստատեցաւ ո՛րչափ խարտիտ էր այդ աղկան վրայ ննեցած սէրն, և թէ հետեւաբար ո՛րչափ դառն վիշտ կրնար պատճառած լինիլ նմա իւր սիրելւոյն ամուսնութիւնն։ Սկսաւ հարցնել ինքն իրեն թէ արդեօք այդ սէր չպտիսի կրնար տակալ ամէն բանի, մինչեւ իսկ երբոր Պետրոս իմանար թէ Սավա՝ իւր հայրը մատնողին, վաճառողին, սպանողին աղջիկն էր։ Սակայն Տոքթորը պիտի ըսէր նմա զայս։ Հաստատապէս որոշած էր։ Իւր պարտքն էր։

Գրեթէ քսան անգամ այնպէս կարծուեցաւ թէ Պետրոս Պաթորի պիտի մեռնէր։ Կրկնապատիկ վիրաւորեալ, բարոյապէս և ֆիզիքապէս, ա՛յնչափ մօտեցաւ մահուան, որ ոչ ևս կը ճանչէր զՄաթիաս Սանտորֆի, որ իւր անկողնին քով նստած էր։ Ոչ ևս կարողութիւն ունէր Սավայի անունն արտասանելու։

Սակայն Տոքթորին դարմաններն յաղթեցին, և յուսաշրջումն սկսաւ։ Երիտասարդութիւնը վրայ եկաւ։ Հիւանդը՝ սրտով բժշկուելէ առաջ՝ մարմնով պիտի բժշկուէր։ Վէրքն ապահով սկսաւ, թոքերը վերսկրծան իրենց կանոնաւոր պաշտօնավարութիւնն, և յուլիս 17ին Տոքթորն անհրկեւան եղաւ թէ Պետրոս Պաթորի վերծ էր մահուան վտանգէ։

Այն օրը երիտասարդը ճանչեց զայն։ Տկար ձայնիւ մը կրցաւ կոչել զայն իւր իսկական անուամբ։

—Քեզ համար, որդեա՛կ, Մաթիաս Սանտորֆին եմ ես, պատասխանեց Տոքթոր Անթէքիրթ, բայց միայն քեզ համար։»

Եւ երբոր Պետրոս իւր նայուածքով բացատրութիւն խնդրել կը թուէր։

—Ուրիշ ժամանակ, ըսաւ Տոքթորն, ուրիշ ժամանակ։»

Գեղեցիկ սենեակի մը մէջ, որ ծովուն կենսատու սիւդերուն հանդիպակաց դիրք մ'ունէր, և որոյ պատուհաններն հիւսիսի և արեւելեայ կողմերն բացուէին, գեղեցիկ մշտադալար ծառերէ հովանաւորեալ, երիտասարդին ապաքինումն արագաբար և ապահովապէս կը կատարուէր։ Տոքթորը շաբաթներ կը խնամէր զայն. ամէն վայրկեան անոր քով կը դիմէր. բայց երբոր բժշկութիւնն աներկայելի երեւցաւ իրեն, օ. ժանդակ մ'առաւ իւր քով, որուն ուշմութեանն ու բարութեան վրայ բացարձակ վստահութիւն ունէր։

Այդ օժանդակն էր Բէսքատ, որ՝ ինչպէս Տոքթորին՝ նոյնպէս և Պետրոս Պաթորիի անձնուէր էր։ Աւելորդ է ըսել թէ Բէսքատ և Մաթիփու բացարձակ լռութիւն պահած էին Բակուզայի դերեզմանատան մէջ անցած իրողութեանց վրայ, և թէ երբէք չպիտի յայտնէին թէ երիտասարդն ողջ հանուած էր դերեզմանէն։

Բէսքատ քիչ շատ մտերմաբար խառնուած էր վերջին քանի մ'ամսոց մէջ կատարուած իրողութեանց։ հետեւաբար ջերմ համակրութիւն կ'զգար իւր Հիւանդին մը. բայ։ Պետրոս Պաթորիի տարփանքն, արդիւնք միջամտութեամբ Սարքանիի, — անդրդամի մը, որ արդար հակակրութիւն մը կ'ազդէր իրեն,— յուզարկաւորական թափորին եւ ամուսնական կառքերուն իրարու հանդիպումն Մթրատանէի ապարանին առջեւ, թագման գործողութիւնը Բակուզայի դերեզմանատան մէջ, այս ամենայն խորապէս յուզած էին այդ բարի արարած, մանաւանդ այն պատճառաւ որ ինքզինք ընկերացեալ կը համարէր Տոքթոր Անթէքիրթի դիտաւորութեանց, առանց տակաւին հասկնալու նոցա բուն նպատակը։

Կը հետեւի ուրեմն թէ Բէսքատ յօժարակամ փութով ընդունեց հիւանդապահի պաշտօնն։ Ապստրուեցաւ իրեն որ հնար եղածին չափ զբօսցնէ զայն իւր զուարճաբանութեամբք։ Բէսքատ չթերացաւ ամենեւին։ Մանաւանդ որ Կրամոզոյի տօնահանդէսէն ի վեր ինքզինք պարտական կը համարէր Պետրոս Պաթորիի, և առիթ կը փնտռէր որ և է կերպիւ հատուցանել նմա պիւր պարք։

Ահա այս պատճառաւ, Բէսքատ ապաքինելոյն քով կեցած, կը ջանար զբաղեցնել անոր միտքը չաղակրատելով, զուարճարանելով և մոռնալու ժամանակ չթողլով։

Այս պայմանաց մէջ էր որ օր մը, երիտասարդին ուղղակի հարցումէն ստիպեալ, պատմեց ի՛նչպէս և ի՛նչ առթիւ ծանօթանալը Տոքթոր Անթէքիրթի հետ։

—Թրապաքոլցի դործն է, Պարո՛ն Պետրոս։ Անշուշտ կը յիշէք... Թրապաքոլցի գործն, որ պարզապէս դիւացաղն մ'Պաթիփու։»

Պետրոս չէր մոռցած այն ծանր դէպքերն որք պատահած էին Կրամոզոյի տօնահանդէսին մէջ, զբօսանաւին հոն հասած ժամանակ, բայց չէր գիտեր թէ, Տոքթորին առաջարկութեամբ, երկու ամպարարներն՝ իրենց արհեստը թողլով՝ անոր քով մնած էին ի ծառայութիւն։

—Այո՛, Պ. Պաթորի, պատասխանեց Բէսքատ, այո՛, այնպէս է, Մաթիփուի անձնուիրութիւնը մեզ համար բազդի հարուած մ'եղաւ։ Բայց մեր առ Տոքթորն ունեցած պարտականութիւնը պէտք չէ մոռցը՞նել տայ մեզ թէ ձեզ ալ պարտական ենք։

—Ինձ ալ։

—Այո՛, պարոն Պետրոս, ձեզ ալ որ այն օրը մեր ամբողջ հանդիսատես հասարակութիւնը պիտի լինէիք, երկու ֆիորինի գումար մը տալով մեզ, զոր շահելու համար չաշխատեցանք մեք, որովհետեւ մեր հանդիսատես հասարակութիւնն, իւր տեղին գինը վճարելէ զկնի անհետ եղաւ։»

Եւ Բէսքատ յիշեցուց Պետրոս Պաթորիի թէ ի՛նչպէս երկու ֆիորին վճարելէ զկնի Բրովանսական թատրոնը մտած ժամանակ յանկարծ աներեւոյթ եղած էր։

Երիտասարդը մոռցած էր զայս միջադէպ, բայց ժպտելով պատասխանեց Բէսքատի։ Տխո՛ւր ժպիտ, վասն զի յիշեց նաև թէ Սավա Թորնթալը դտնելու համար ամբոխին մէջ խառնուած էր։

Ցայնժամ վերստին փակեցան աչքերը։ Միտքը կը բերէր այն օրէն ի վեր անցած բաները։ Սավայի վրայ խորհելով, զոր ամուսնացեալ կը կարծէր և պարտէր կարծել, դառն անձկութիւն մը պարապնդեց զայն, և քիչ մնաց որ անիծէր զինքը մահուան ճիրանէն կորզողները։

Բէսքատ տեսաւ որ Կրամոզոյի տօնահանդէսը տխուր յիշատակներ կը բերէր Պետրոսի միտքը, չպնդեց, մինչեւ իսկ լռեցաւ, ըսելով ինքնիրեն։

(Շարունակելի)

ԼՅՍ ԱՒՈՒՐ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Մուխթար փաշայի և Սբր Հ. Տրամինեանի հրաման անհամաձայնութիւնը վերջացաւ։ Այսպէս հաւանեցաւ որ անգլ. սպայք անդամներին Սուաքինի պահպանութեան յանձնեալ զորաց համար։

— Նախընթաց շաբթու մէջ, եգիպտական կառավարութիւնն ի հրապարակ հանեց իւր կոխել տուած նոր դրամները։ Մի քանի օր վերջն երեւան ելաւ թէ նոյն միջոցին նոյն դրամոց ձեւով շատ մը կեղծ դրամներ ալ հրապարակ հանուած էին, որոց քանակութիւնն յայտնի չէ դեռ։

—Հեռագրական նոր տեղեկութիւնք կը հաստատեն, հակառակ Սոֆիայէ տրուած հերքման, թէ Ալեքսանդր Իշխանը չընդունիր հնգամեայ անուանումը։

—Լոնտոնէ մարտ 17 թուով հեռագրեր Թուրքիոյ և Անգլիոյ միջև մտերմական բանակցութեանց խօսքը կ'ընեն նոր համաձայնութեան մը համար, որով Անգլիա Եգիպտոսէն պիտի ելնէ եղեր, Միջերկրականէն նոր կղզի մը ստանալու, և ասոր փոխարէն Յունաստանի շարժումն արգիլելու և Թուրքիոյ դրամական օգնութիւն մ'ընելու պայմանաւ, և թէ Սբր Ու. Հուսդ այս նպատակաւ կ'երկարէ եղեր իւր բնակութիւն ի Կ. Պոլիս։ — Բայց այսպիսի զրոյցք ընդհանրապէս անվստահելի են։

— Աթէնքէ քաշուած նոր հեռագրեր (17 մարտ), բանակին ցրուիլը չծանուցանելէ զատ, ընդհակառակն կ'իմացնեն թէ զորաց թիւն 100,000ի պիտի բարձրանայ։

— Թագաւորին նախագահութեամբ արտասովոր խորհուրդ մը գումարուած է մարտ 16ին, յորում հելլէն բանակին երեք զօրավարք տեղեկագրեր մատուցած են բանակին արդի կացութեան վրայ։

—Սոֆիայէ կը հեռագրուի մարտ 17ին թէ հնգամեայ անուանումէն ժողովուրդն ընդհանուր կերպիւ դժգոհ է միշտ։

— Այս աւուր Սուլթանդաւաս առնուած տեղեկութիւնք պուլկարական խնդրոյն մասնաւոր կարգադրման յոյս չեն տար։

—Քիւնարտի Օքէնն մեծ շգենաւն, որ Անգլիոյ և Ամերիկայի միջև կը բանէր, մարտ 14ին ընդմեջաւ ամերիկեան եղերաց մօտ, բախելով ուրիշ շգենաւու մը։ Բայց ծովը խաղաղ լինելով, կարելի եղաւ ազատելը զօր ճամբորդներն, 611 հոգի, և շգենաւուն բոլոր մարդիկն, 205 հոգի, որք օգնութեան եկած Ֆոլա շգենաւն ելան։ Բայց շգենաւուը թղթատար էր, և 600 պարկ նամակ կը պարունակէր, որոց մէկ փոքր մասը միայն կրցաւ ազատուիլ, և նմանապէս կորան բոլոր բեռներն, 1,850 տակառաչափ։ Օքէնն շգենաւուն մէջ իրենց բոլոր գոյքերն ու վաճառքը կորուսանող ճամբորդք իրենց վնասները կը պահանջեն Ընկերութենէն, որ ամէն պատասխանատուութիւն կը մերժէ, բայց կը ծանուցուի թէ իրաւախոհ պիտի լինին։ —Օքէնին բախող անծանօթ շգենաւուն անմիջապէս ծովուն յատակը գնաց իւր բոլոր մարդերով։

—Բժշկական Ակադեմիան 10,000 Ֆրանկ նպաստ քուէարկեց Բասդոռեան հաստատութեան վասն կատաղարմանութեան։

—Նուպար փաշա դնդապետ Պ. Մանքրիէֆի հետ գնաց Սուէզ քաղաքն, հոն երեւան եղած նաւթահորերն աչքէ անցուցանելու։ Եգիպտոս կ'երեւի թէ կարող պիտի լինի իրեն պէտք եղած քարիւղն մասամբ կամ ամբողջովին իւր մէջէն հանել այսուհետեւ։

—Զարին մէկ Իւքաղը կ'արտօնէ Պալդիկեան գաւառաց մէջ (որոց ժողովուրդը գերման է մեծ մասամբ) բանի գնել անհարից կալուածներն, օրինաւոր ժողովրդական պիտոյից համար եկեղեցիներ, գերեզմաններ, եկեղեցական կալուածներ, մատուռներ և գպրոցներ շինելու համար, ուր որ պէտք կայ։ Այս բանի գնման կանոնները ցոյց տրուած են։

—Անգլիոյ նախարարք անհամաձայն կը մնան Պ. Կլատստոնի իռլանդական ծրագրաց վրայ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կը լսենք թէ Ազգային ժողովը յառաջիկայ ուրբաթ օր եւս նիստ չունի։

Երուսաղեմայ դատին համար խառն ժողովը ինիստ հրաւիրուած էր երէկ։ Վեհ. Շահպազ Կարապետ էֆէնտի, իբրեւ իրաւագէտ և խնդրոյն ի մօտոյ տեղեակ, նոյնպէս հրաւիրուած լինելով, կարծիք յայտնեց թէ խնդիրը խառն ժողովով նկատողութեան առնէ առաջ, պէտք է իրաւագէտ և ձեռնհաս անձերէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմել որպէս զի խնդրոյն ելից վերայ խորհելով պարտուպատշաճը տնօրինէ։ Ժողովը օրինաւոր դատելով Շահպազ էֆէնտիի այս առաջարկութիւնն, իւր նիստն լուսաձգեց և յանձնաժողովը կազմելով որոշեց որ յառաջիկայ ուրբաթ իւր առաջին նիստն ընէ։

Երէկ, խառն ժողովոյ ցրուելէն յետոյ, Կրօնական ժողովը իւր շաբաթական նիստն ըրաւ բնդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Դեր. Խորէն Նարպէյ Սրբազանի և զրաղեցաւ կարգ մը ամուսնական խնդիրներով։

Ազգային նշանաւոր վիպասան Պ. Բաֆֆի սկսած է Աչյոնգանի մէջ հրատարակել պատմական վէպ մը, Մամուէլ այր նիւթն առնուած է Հայոց Պատմութեան չորրորդ դարու անցքերէն։ Դաւէթ-Բէյէն և Պարոյր Հայկանէն յետոյ, մեր անուն վիպասանին պատմական երրորդ վէպն է այս։

Մեր այս աւուր երրորդ երեսին մէջ կը հրատարակենք Մոսկուայէն կարեւոր թղթակցութիւն մը, որ կը նկարագրէ Պ. Մ. Էմինի յիսնամեայ գործունէութիւնը։

ԻԼԱՆԸ ՄՈՒՀԻՄ

ԱՍԷԼ ԶԻՅԱՐՏԻ ԻՄԱՄ ՍԱՀԻՊԼԻԷՐԻ ԹԱՐԱՅԵԶՆՏԱՆ ԹԻՐԹԻՊ ՕԼՈՒՆԱՆ

ԲԻԼԻՎ Է ՍԻՌՈՒ ՏԸ ՊԼԱՆԷԱՌ
ԿՈՒՏՐՈՆ ՏԸ ԿԻՒՑՈ
ՍԻՆԱԲԻՋՄ ՌԻԿՕԼՕ
ԲՈՒՏՐԸ ՏԸ ՌՕԺԻ
ԷՆԺԻԷՐՍԻՕՆ ՊՈՒՕԼ

Նամ էֆզալարքն Տէրսաատէթ էֆզաճարքն պաղբը թարաֆընտան թագլիտվէ հիլլէլի օլարագ ֆիրուլիթ օլունմագտա օլտուղու մէսմուրմրզ օլուգ, պունտան պէօյլէ պու մագուլէ ալպ ու իթա իլէ մէշղուլ օլանլարքն իսմի զաղէթալար վասթասը իլէ իլան վէ միլիթէճասըրլէրինին հագդընտա տահի նիզամը տայիրէսինտէ իգամէի տավա օլունճաղը պիլճիւմէ էճզա թիճարլարը իլէ էճզախանէ սահիպլէրինէ իսթար օլունուր։

Բարէկ էճզաճըլարընտան
ՊԼԱՆԷԱՐ Վէ ՔՈՒՄԲ.
Ժ. ՖԷՐՐԷ
Հ. ՖՈՒՐՆԻԷ Վէ ՔՈՒՄԲ.
Բ. ՐԻԿՕԼՕ » »

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊՈՏՈՒԱՆՇԱՆԸ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Թոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ իւրայի առաջին ատիճան շնորհել ազգային ականաւոր բժիշկ Տօքթ. Մ. Խորասանճեան էֆէնտիի։

Տօքթ. Խորասանճեան էֆէնտի ուսուցչական կարեւոր պաշտօն մ'ունի կայսերական Բժշկական Վարժարանին մէջ։

Դօսօվայի կեդրոնական կառավարիչ Վէհպի փաշա՝ Դարա Հիսարը Շարգեի կառավարիչ անուանեցաւ։

Մաղկերտի կառավարիչ անուանեցաւ Երբեմն Ուրֆայի կառավարիչ Ճէլալ պէյ։

Բաղարբաշութեան Վարչական Ժողովոյ անդամ անուանեցաւ նոյն պաշտօնատան Թղթակցութեանց դիւանի քարտուղար Շիւքրի էֆէնտի որ այս առթիւ Սանիէ Միւթէմայիզի աստիճան ստացաւ։

Ալ և այլ կարգի Մէճիտիէ պատուանշանք արուեցան զինուորական սպայից ոմանց։

Իտալական կառավարութիւնը Սէն Մօրիս պատուանշանի առաջին աստիճանը նուիրեց Արտաքին գործոց նախարար Սայիտ փաշայի։

Իտալական դեսպան Պարոն Կլավնիա երէկ Բ. Դուռն երթալով պատուանշանն անձամբ յանձնեց Ն. Վսեմութեան։

ՀԻԻՊԱՏՈՍԱԿԱՆ ՓՈՓԽՄՈՒՆՔ

Բէյլթիայի օսմանեան ընդհանուր հիւպատոս անուանեցաւ Ամէնքի օսմանեան դեսպանատան նախորդ ընդհանուր քարտուղար Միւնիր պէյ։

Մալթայի օսմանեան ընդհանուր հիւպատոս անուանեցաւ Ֆիլուսի օսմանեան նախորդ հիւպատոս Մավրոյենի էֆէնտի։

Կը ծանուցուի թէ Քօրֆուսի օսմանեան ընդհանուր հիւպատոս Ազարեան էֆէնտի Շիրա պիտի փոխադրուի նոյն պաշտօնով, հանդուցեալ Մաքսուտ Միքայէլ էֆէնտիի տեղ։

Իսկ Բեռլսպուրկի օսմ. դեսպանատան առաջին քարտուղարի պաշտօնին համար, որ բաց մնացած է Էշրեֆ էֆէնտիի մահուամբ, քնարելի մը չկայ։ շատակուիր ցարդ։

ԹՈՒՐՔՕ-ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ

Այս աւուր թուրք թերթերը նոր տեղեկութիւն մը չեն պարունակեր Թուրքօ-պուլկարական խնդրոյն նկատմամբ։

Ծաբ ոչ Պօֆոր միայն իւր երէկի թուով զրոյց մը կը լսէ թէ, այս շաբաթ օր Սոֆիայի մէջ Ալեքսանդր իշխանին նախագահութեամբ գումարեալ արտասովոր խորհրդոյն որոշմանց վերայ, իշխանն հաւաներ է հպատակիլ մեծ Տէրութեանց ճնշման, և յայտարարեր է թէ պատրաստ է ստորագրել Թուրքօ-պուլկարական Պայմանագիրն, բողոքելով հանդերձ իւր հնգամեայ պաշտօնավարութեան վերաբերող յօդուածին դէմ։

Իսկ Թաքէթ կ'ըսէ թէ մինչեւ երէկ իրիկուն ո'ր և է տեղեկութիւն հասած չէր մայրաքաղաքս, յիշեալ խորհրդոյն որոշմանց վրայ։

Արտաքին գործոց Վսեմ. նախարարն և խորհրդական Վսեմ. Տատեան էֆէնտի երէկ Բարձր. Մեծ-Եպարքոսին քով երթալով, երկարօրէն խորհրդակցեցան։ Թաքէթ կ'իմանայ թէ սոյն խորհրդակցութեան առարկայ եղած են Բ. Դրան և Աղեքսանդր իշխանի միջև կատարուած բանակցութիւնք։

ՕՍՄ. ՆՈՐ ԴՐԱՄԵՐՈՒՆՔԸ

Բարձրագոյն հրամանաւ նոր արժէթուղթեր շրջարերութեան հանուելով պիտի յատկանան զինուորական ծախսուց։ Սոյն արժէթուղթք, որոց տպագրութիւնն արդէն սկսուած է, բոլոր գաւառները ղրկուելով ժողովրդոց մէջ պիտի բաժնուին։ Ցիշեալ արժէթղթոց համար 6 առ 0/0 տարեկան տոկոս և 4 առ 0/0 գլխամաս պիտի տրուի և ամբողջ գումարը 25 տարուան մէջ պիտի վճարուի։

Վերոյիշեալ արժէթղթոց կարողները, կառավարական բոլոր գանձատանց կողմէ պիտի ընդունուին ի հաշիւ ամէն կարգի տրոց։ Նոյնպէս Թուրքիոյ բոլոր երկիրներու մնտուկները դրամով պիտի վճարեն իրենց ներկայացեալ արժէթղթոց դէնը։

ՏԱՐԵԴԱՐՁ ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍԵՐ

Երէկ, Գերմանիոյ Կայսեր ծննդեան 89րդ տարեդարձին առթիւ, Այնալը-Զէյմէի գերմանական մատրան մէջ գոհաբանական աղօթքներ կարդացուեցան և մարթանքներ եղան վասն պահպանութեան կենաց ծերունի Վեհապետին։ Բայց ի Պ. Բատովիձէ, դեսպանատան պաշտօնեայներէն և մայրաքաղաքիս գերմանական հասարակութեան երեւելիներէն, սոյն արարողութեան ներկայ էր նաև բումանական դեսպան Պ. Կիքա, ըստ որում Բումանիոյ թագաւորն ազգականութիւն ունի Գերմանիոյ կայսերական գերդասանին հետ։

Միջօրէին սովորական ընդունելութիւնք եղան դեսպանատան մէջ ուր կայս. պալատէն և Բ. Դռնէն յատուկ պաշտօնատարք գնացին ի շնորհաւորութիւն։

Տ. ՕՍՄԱԿԻՄ Գ.

Լ. Թէրէթ կը ծանուցանէ թէ Ցունաց Նախկին Պատրիարքը մտադիր է ուխտագնացութիւն մ'ընել յերուսաղէմ։ Ն. Սրբազնութիւն պիտի մեկնի մօտ օրերս, որպէս զի Զատկական տօներն անդ անցունէ, և վերադարձին Այնօրօղի վանքը պիտի այցելէ, մայրաքաղաքս դալէ առաջ։

Տ. Օսմակիմ Գ., ըստ սովորութեան, Ֆէնէրի Պատրիարքարանին միջոցաւ Բ. Դռնէն արտօնութիւն խնդրած է իւր այս ուղեւորութեան համար։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Աւէտարան Լրագրի երէկի թիւէն կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները։

Վերջին շաբթուան մէջ, բաւական գնորդներ երեւցան մեր հրապարակին վրայ։ ասոնք կուգային Տրապիզոնէն, Պրուսայէն, Սամսունէն և Սեւ Ծովու եզերաց ուրիշ քաղաքներէն, ինչպէս նաեւ Ադր. Պոլսէն, Սէլանիկէն և Ալպանիայէն և բաւական լաւ գործեր ըրին, մանաւանդ պամբակի և բամպակեղէնների վրայ։ Այս առեւտրական շարժումն շատ աւելի ընդարձակ պիտի լինէր, առանց այն մաքսային դժուարութեանց զորս կը յարուցանեն Արեւ. Բումէլիի իշխանութիւնք Կ. Պոլսէն ապրանաց առաքման դէմ։ Հետեւարար այն գնորդք որք գաւառներէն իմանալով որ Մուսթաֆա-Փաշայի մաքսային շրջանն չնշուած է, խմբովին մայրաքաղաքս եկած էին ապրանք գնելու համար, եւ դարձան առանց բան մը գնելու։ Անանց մէկ սակաւաթիւ մաս մը դեռ ատ կը մնայ, սակայն խոհեմութեամբ խնդրոյն լուծման կ'սպասէ, առանց գործ մ'ընելու։

Արտահանեալ ապրանաց մէջ, յիշատակութեան արժանի են գորգերն որոցմէ մեծ քանակութեամբ գնուեցան։

Հետեւեալ իրողութիւնը նոր դժուարութիւն մը չեն պարունակեր մեր և Արեւ. Բումէլիի յարաբերութեանց դէմ։ Յիշեալ գաւառէն զրկուած նամակներն զրոյց պուլկարական թղթադրօշմ փակցուած լինելով, մայրաքաղաքիս նամակատունը իրր անդրօշմ կը նկատեն զանոնք և որոշեալ սակագինը կ'առնուն։ Աւելորդ տուրք մ'է այս որուն կ'ենթարկուին Արեւ. Բումէլիի հետ գործ ունեցող վաճառականք։

Վերջին փետրուար ամսոյ մէջ Օսմ. ծխախոտի Բէմիի հասոյթք հասած են 98,000 ոսկւոյ, մինչ անցեալ տարւոյ միևնոյն ամսուան հասոյթք 104,000 ոսկւոյ բարձրացած էին։

Տէրքոսեան ջրի Ընկերութեան բաժանորդաց թիւը կը հասնի, ցվերջ փետրուարի, 2168ի, այսինքն նախորդ ամիսէն 58 աւելի։ 1885 փետրուար ամսոյ մէջ յիշեալ բաժանորդաց թիւն 150 էր։

Մաքսատան վերատեսուչ Էսիպ էֆէնտիի մէկ տեղեկագրոյն վրայ, Բ. Դուռն ստիպողական ձեռնարկներ ըներ է որոց քով որ անկ է, և կը յուսացուի թէ մօտ օրուան մէջ բարձունն Արեւ. Բումէլիի հետ առեւտրական կանոնաւոր յարաբերութեանց դէմ յարուցեալ արգելքները։

Բ. Դրան այս ձեռնարկներ կը վերաբերին բումէլիական իշխանութեանց այն որոշման՝ որոյ համեմատ Կ. Պոլսոյ ճամբով յիշեալ գաւառը զրկուած եւրոպական ապրանքներէն Ռեպէրէ մը կը պահանջուի, հաստատող թէ իրենց մաքսատուրքը վճարած են արդէն ի Թուրքիա։

ԷՏԻՄՈՒՐԿԻ ԴՈՒՔՍՆ

Կրէտէէն հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն Անգլիոյ թագուհւոյն երկրորդ որդւոյն ի Սուտա ժամանման և Կրէտէի մէջ եղած պաշտօնական ընդունելութեանց վրայ։

Սեպտ. 22, շաբաթ առաւօտ, Թագաւորը Սուտայի ծովախորշը մտաւ, բերելով Էտիմպուրկի Դուքսն՝ ընդհանուր հրամատար Միջերկրականի անգլիական նաւատորմին, որ կը յաջորդէ ծովակալ Լորտ Ճոն Հէյի։

Միջօրէին, կուսակալ Սաիտ փաշա, համազգեստուիք, ընկերակցութեամբ կղզւոյն զինուորական հրամատար Էսէհէմ փաշայի, այցելութեան գնաց նորեկ ծովակալին, Կ. Պոլսէն ղրկուած հեռագրական հրամանաց համաձայն։

Յաջորդ օրը, Էտիմպուրկի Դուքսը փոխադարձ այցելութիւն տուաւ կուսակալին։

Միջօրէին 2 ժամ յետոյ, Դուքսը դեր-ծովակալի համազգեստ հագած, և ընկերակցութեամբ Կրէտէի անգլիհիւպատոս Պ. Պիլիսթիի, Թէոդէրի հրամատարին և իւր առաջին թիկնապահին, եղաւ շգենաւէն և կղզին մըտաւ։

Դուքսն իւր հետեւորդներով անցաւ հանրային պարտէզին առջեւէն ուր թնդանօթաձիգ զօրաց և հետեւակազօրաց գունդեր բարեւի կեցած էին։ Զինուորական նուագածուաց գունդքն անգլիական ազգային երգը կը նուագէր և Հանեայի ամրոցէն թնդանօթի 21 հարուածներու արձակմամբ ողջունուեցաւ Ն. Բարձրութիւն գալուստը։

Երբ կառքը կառավարական ապարանքին բակն հասաւ, Սաիտ փաշա՝ շրջապատեալ իւր պաշտօնատարներէ, մերձեցաւ կառքին և Դուքսին ձեռքէն բռնեց որ վար լինէ։ Ապա, ընդունելութեանց մեծ դահլիճն ելան ուր Դուքսը մնաց մէկ քառորդ ժամ։ Ն. Բարձրութիւն այցելութիւն տուաւ նաև զինուորական հրամատար Էսէհէմ փաշային, և ծովակալ Հիւսէին փաշային, որ կ'ըսուի թէ առանց համազգեստի ընդուներ է զնա։

Էտիմպուրկի Դուքսին ժամանումէն քանի մը ժամ յետոյ, հրաժարեալ ծովակալ Լորտ Ճոն Հէյ մեկնեցաւ Թէոբ շգենաւով Լոնտոն երթալու համար, ուր նոր պաշտօնի մը գլուխ պիտի անցնի։

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԴԱՏ ՄԸ

ՖԷՆԷՐԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ԱՌՋԵՒ

Նախորդ թուով մը պատմեցինք Ցունաց Պատրիարքարանին առջեւ ներկայացեալ ամուսնական դատ մը որ մեծ ուշադրութիւն գրաւած է։ Հանգուցեալ Կօրչաքոֆ իշխանի որդւոյն կինը (գուսար Ռումանացի Սթուրձա իշխանին) ամուսնալուծութիւն կը պահանջէր։ Իշխանուհւոյն ներկայացուցիչն էր մայրաքաղաքիս յոյն փաստաբաններէն Պ. Արսենիոս։ Ֆէնէրի Սինոդն թէև ի սկզբան ինքզինքն անձեռնհաս յայտարարած էր լուծելու համար ամուսնութիւն մը որ կատարուած է ի Փարիզ, ռուսական եկեղեցւոյ վարդապետին ձեռամբ, սակայն ի վերջոյ քննութեան առած էր Իշխանուհւոյն կողմէ յառաջ բերուած պատճառներն։

Արդ, Ֆէնէրի Սինոդն, իւր այս ուրբաթ աւուր նստին մէջ, որ դուռ մարուեր է ընդ նախագահութեամբ Կիպրիքոսի Մէթրապոլտին, որոշեր է իրաւունք տալ Սթուրձա իշխանուհւոյն և ամուսնալուծութիւնը վճռեր է։

Մանրամասն Օրէնքով որ կը հաղորդէ սոյն վերջին տեղեկութիւնն, հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէ այս առթիւ։

«Կը լսենք թէ այս գործոյն մէջ, գլխաւոր դերը կատարեր է Պ. Ս. . . . որ զանազան խոստումներով յաջողեր է համոզել Սինոդի անդամներէն շատերն այսպիսի տպօրինաւոր վճիռ մը տալու, որոյ դէմ բողոքած է Սինոդի փոքրամանութիւնն զոր կը կազմեն Մելէնիկի Մէտրապոլիտ Տ. Բրօկոպիոս, Էնոսի Մէտրապոլիտ Տ. Անթիմոս, Մեթիմնէի Մէտրապոլիտ Տ. Նիկէֆոր, և Սամոսի Մէտրապոլիտ Տ. Կապրիէլ։

«Ուրիշ առթի վերապահելով հանդերձ խօսիլ այս կարեւոր խնդրոյն վերայ, կը յուսանք թէ Ֆէնէրի Սինոդն ըմբռնելով իւր գործած սխալը, պիտի ջնջէ իւր որոշումն, որպէս զի այսու խոյս տայ այն աղետաբեր հետեւանքներէն զորս կրնայ ունենալ այս օրինակ զեղծում մը եկեղեցական օրինաց որք կ'արգելուն Օրթօտօքս եկեղեցւոյ միջամտութիւնն ուրիշ եկեղեցւոյ մը ձեռնհասութեան պատկանող գործոց մէջ։»

Պետական Խորհուրդն ինչ ինչ բարեփոխումներ ներմուծած է Բաղաքային Բժշկական Վարժարանի Կանոնագրոյն մէջ։

Բարձր. Մեծ-Եպարքոսն և Արտաքին գործոց Վսեմ. Նախարարն երէկ առաւօտ կայս. պալատ երթալով, Վեհ. Սուլթանի ինչ ինչ հրամաններն ստացան։

Վսեմ. Սայիտ փաշա երէկ եպարքոսական պաշտօնատան մէջ ընդունեց դեսպաններն։

Վեհ. Սուլթանն հրամայած է որ ամսաթոշակ մը յատկացուի Արտաքին գործոց Նախարդ. Նախարար և Տրապիզոնի կուսակալ հանգուցեալ Ասիմ փաշայի այրւոյն և որդւոց։

Էվգաֆիլ և Կրթական Վսեմ. Նախարար երէկ Բ. Դուռն երթալով, Բարձր. Մեծ-Եպարքոսի ինչ ինչ հրահանգներն ստացան։

Ռուս կառավարութիւնն այս օրերս Բ. Դրան ուշադրութիւնն հրաւիրած է այն յապազման վրայ որ տեղի կ'ունենայ Թուրքօ-ռուսական պատերազմի տուգանաց յատկացեալ գումարներու վճարման մէջ։

Թաքէթ կըսէ թէ առաջին անգամ չէ որ կը պատահի այս բան և թէ ռուսական դեսպանատունն երբեմն երբեմն այս մասնաւոր գրեր կ'ուղղէ Բ. Դրան։

Տիկին Հօպարթ փաշա մայրաքաղաքս կ'սպասուէր Վառնայի երէկի շոգենաւով որ Անգլ. ծովակալին հիւանդութիւնը միշտ նոյն վիճակի մէջ է. մերթ թեթեւ բարւոքում մը կը նշմարուի և մերթ կը ծանրանայ։

Կէլիպոլուէն կը գրեն թէ քաղաքին մէջ կատուցեալ զինուորական հիւանդանոցն աւարտելով, բացման հանդէսը կատարուեր է ի ներկայութեան կիսաբաժնի զօրավար Ասափ և Ռիֆաթ փաշաներուն։

Նորակառոյց հիւանդանոցը Վեհ. Սուլթանի անուան նուիրեալ է։

Այս օրերս եկած կայս. Իրատէ մը կը հրամայէ ստիպողաբար կատարել ներկայ 1302 (1886-87) տարւոյ զինուորագրութիւններն։

Հետեւաբար Սպարապետի Դուռն հարկ եղած հրահանգները ղրկած է գաւառական իշխանութեանց։

Ռումանիոյ թագաւորը պաշտօնական հացկերոյթի մը տուեր է ի պատիւ Մանֆա փաշայի և սերպական ու պուլկարական պատուիրակաց։ Կը կարծուի թէ այս պատճառաւ է որ Մանֆա փաշա և Բէչիր պէյ յետաձգած են իրենց ուղեւորութիւնն ի Կ. Պոլիս։

— —

Հռոմի օսմանեան նորընտիր դեսպան Ֆօթիատէս փաշա շաբթուս իւր պաշտօնատեղին կուգեւորի։

Կը պատմուի թէ Կրէտէի մէջ նպարեղինաց գներն այն աստիճան բարձրանալու վրայ են, որ տեսակ մը սով կը տիրէ կղզւոյն մէջ և բնակիչք շատ նեղութիւն կը քաշեն։

Ռուսական Բլոխոն զրահաւորն որ վերջերս Պիրէոն գնացած էր, վերստին միջազգային նաւատորմին միացեր է ի Սուտա։

Կը կարծուի թէ այս զրահաւոր Պիրէոն գնացած էր իւր ներկայութեամբ աւելի պատկառանք մը տալու համար այն հանդիսաւոր արարողութեանց որք կատարուեր են Ալեքսանդր Բ. կայսեր մահուան և արդի Կայսեր գահակալութեան տարեդարձին առթիւ։

Կայս. հրամանաւ, երէկ Պէշիքթաշի մէջ բաւական քանակութեամբ ածուխ բաշխուեցաւ ամէն ազգի աղքատաց։

Էտիմպուրկի Դուքսին Սուտա հասած օրը, Կրէտէի կեդրոնական բանտին մէջ արիւնարուռչտ կռիւ մը տեղի ունեցեր է քրիստոնեայ և թուրք բանտարկելոց միջև։ Մէկ թուրք և չորս քրիստոնեայք ծանրապէս վիրաւորուեր են։ Կուսակալ Սաիտ փաշա անձամբ միջամտեր է այս անկարգութեանց առաջն առնելու համար։

— —

Հոլանտական դեսպան Պ. Վան Թէթասի եղբայրը մայրաքաղաքս եկաւ նախընթաց օր։

Հէյպէլի կղզւոյն Աւեւտրական բարձրագոյն վարժարանի Հոգաբարձութեան, անօրէնին և աշակերտաց միջև անհամաձայնութիւնը ծագած լինելով, դասախօսութիւնք դադրեր են շաբաթէ մ'ի վեր և աշակերտք (թուով իբր 200) իրենց տուները ղրկուեր են։

Կրէտէէն կը գրեն թէ անցեալ շաբթու Մալէվիզիի Բիրձու գիւղին մէջ Քաբթան Սթաւրօլաքի անուն գիւղացի մը սպաննուեր է իւր որդւոյն ձեռամբ։

Այս հայրասպանութեան շարժառիթ կը կարծուի սիրային խնդիր մը։ որդին կուզէր ամուսնանալ օրիորդի մը հետ, իսկ հայրը կ'ընդդիմանար այս ամուսնութեան։

Թէ ոճրագործն, և թէ եղբայրն որ մեղսակից էր իրեն, ձերբակալուեր են։

Ուրֆայի գաւառական հաշուակալն իւր պաշտօնին մէջ շատ մը զեղծումներ գործած լինելով, պաշտօնէն եղած և դատաստանի ենթարկուած է տեղական իշխանութեան կողմէ։

Նիկոմիդիայէն կը գրեն առ Մէնէրէս թէ հայ կօշկակար մը այս օրերս քաղաքին դատարանն երթալով դատաւորին առջեւ ծնրադրեր է, յայտնելով թէ գաղտնիք մ'ունի հաղորդելիք, և այնպէս մը ձեւացնելով թէ անոր ձեռքը պիտի բռնէ, ուժգին ապտակ մ'ինչուցեր է դատաւորին երեսին։

Այս անակնկալ յարձակման վրայ, ժողովոյ բոլոր անդամք սարսափմամբ կը մեկնին սրահէն, երկնչելով կօշկակարին հարուածներէն։ Իսկ սա կաղաղակէ թէ ինք զինք չունի վրան, այլ պարզապէս ուզած էր դաս մը տալ դատաւորին։

Կօշկակարը ձերբակալուած է և հարցաքննութեան ենթարկուած։

ԱԶԴ

ՍՏԵՓԱՆ ԷՖ. ՍՈՒՐԷՆԵԱՆ, Բիանիսդ, կը խնդրէ մեզնէ ծանուցանել թէ իւր բընակութիւնը փոխադրած է ի Բերա, Կալաթա—Սերայի կից, Գարթալ փողոց, թիւ 10։

ԼԱ ՄԱՆՀԱՅՄ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԸՆԴԴԻՄ ՓՈԽԱՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳԱՑ
Ընդհ. Գործակատարութիւն Պոլսոյ
Տ. Լեզի ե- Վէրէոր որդի

Կ'ապահովագրեն ամէն էշխարհներ և ծովարներ որք կը պարունակեն գրամ, թանկագին մետաղ, արժէթուղթ, դրամատոմոք, գոհարք եւ, յանձնուած ամէն աղգի թղթատարական Վարչութեանց կամ փոխադրութեան ընկերութեանց։ Վերոյիշեալ ապահովագրութիւնք երաշխաւորեալ են Մանհայմ էրզիր յանուն դրամատարաց խմբակի մը այր դրամագլուխն է 30,500,000 ֆրանկ։

Կ'ապահովագրեն շոգենաւով, կառավարով, եւ մեծ ու փոքր երթեւեկութիւն ընող առագաստանաւերով փոխադրեալ ապրանքներ։

Գներն և պայմաններն յոյժ չափաւոր։

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել առ

Պ. Պ. Տ. ԼԷՊԼ ԵՒ ՎԻՒԹՈՐ ՈՐԴԻ

Պոլսոյ ընդհանուր գործակատարք «Մանհայմ» Ապահովագրական ընկերութեան։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՅՍԵՐ

ԱՀԱՅՆՍ ՀԱՎԱՍ

Փարիզ, 21 մարտ

Երեսփոխանաց ժողովն ընդունեց օրինական ծրագիր մը որ արտօնութիւն կուտայ Փարիզ քաղաքին՝ 250 միլիոն ֆրանքի փոխառութիւն մը հանելու։

Լոնտոն, 22 մարտ

Գրէնվիլի նայելով, անգլ. կառավարութիւնը մտադիր է Եգիպտոսէն ետ կոչել զՍըր Ուոլֆ։

Կը կարծուի թէ հանրածանօթ Պ. Ճոն Պրայթ պիտի անդամակցի Կլատստոնեան Դասակցութեան, եթէ տիրող անհամաձայնութիւնը շարունակէ և Պ. Չեմբրլէյն և այլ անդամք հրաժարին։

Իսմայիլիա, 21 մարտ

Մարտ 11էն մինչեւ 20 Սուէզի ջրանցքէն անցնող նաւուց թիւն է 92 և տոնաբերեալ հասոյթը 1,660,000 ֆրանք։

ԳՐԱՄԱՏԱՆ

ԳԵԼԼԹԻՈՍ ԳՈՐՍԱ

Ղալաթիա, 11 մարտ

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՒԹ

ամիս Լանդարայի վրայ պանքայի)	110 7/8
3 » » » (ցմանկեն)	110 1/2
3 » Բարդ. » (պանքայի)	22 75
3 » » » (ցմանկեն)	22 82 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Քօնսոլիտ

	Դահեկան
Երէկ երեկոյ գոց. (Մինչ. Դ. Սերի Գ. Կ.	16 28
Գօրգային գոցուելէն վերջը » »	16 28
Բերայի մէջ ..... » »	— —
Աւառաւոտեան բացուելուս » »	16 22
Բարձրագոյն գին ..... » »	16 22
Նուազագոյն » ..... »	16 21
Կէս օրին ..... » »	16 21
Փոխառութիւն 1858) Ա. Սերի Դ. Կ.	26
» 1862)	
» 1860)	
» 1863) Բ. » » Կ. » »	16 07 1/2
» 1872)	
» 1865)	
» 1869) Գ. » » Դ. »	16 22
» 1873)	

Ինսիդիէ Եգիպտական

Երէկ իրիկուն գոցուելուս	77 20
Այս առաւ. բացուելուս Գ.Կ.	77 15
Կէս օրին	77 15

ԲԱՆԵՆԷՍՈՒՄՈՒԹ

Ոսկէթէ ժէներալ ..... Գ. Կ. Ամբ.Լ.Ր.	3 20
Քրեսի ժէներալ ..... » » Օսմ. »	6 10
Պանք տը Գոնս ..... » » » »	4 30
Ոսմ. Շանմ է վալէօր... » » » »	3 20
Քրամանէյ ..... » » » »	285
Բուլգարիի երկաթուղի ..... Ֆր.	39 25
Օպլիկասիոն տը Բրիորիթէ ..... »	—
Բասմենթալի Լաբրօսմի ..... »	58

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳՈՐՍԱ

Լոնտոն, 22 Մարտ, ժամ 5 վերջ. 45 երեկոյ

Անգլ. քանսոլիտ	100 3/

Օթոման 1871	72 3/4
Փոխառութիւն 1877	86 1/4
Պանք Օթոման	11 3/8
Ռուսական փոխառ. 1873	99 1/2
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	69 3/8
» առանձն. (բրիմիէ)	94 1/4
Տայրա Սանիէ	71 1/2
Տօմանիակ (փոխառ. Բօյլիա)	94 1/4
Հունգարական պարտաթուղթ 4%	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	— —

Վիեննա, 22 Մարտ, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնդոնի վրայ	125 95
Օսմանեան երկաթուղի	19 20

Բարիզ, 22 Մարտ, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %	109 10
» » 3 % (գբ. կոր.)	80 77 1/2
Օսմանեան քանոնիք Սերի Դ. բացուեցաւ	15 20
» » » բացուեցաւ	15 12 1/2
» » Սերի Բ.	16 85
» » Գ.	15 10
Օսմանեան երկաթուղի	38 50
» Բէյրութի բանեցուղթք	— —
Պանք Օթոման	537 50
Գրեթի Լիոնէ	531 25
» Ֆոնսիէ	1350
Բանքեսսան Լիոնի	1221 75
Սուէզի ջրանցք	2107 50
Ռուսական 5% 1877ի	100 3/4
Իտալական Ռանթ	97 87 1/2
Եգիպտական միացեալ	351 25
Սպանիական (արտաքին)	58 1/4
Բրեսիլեան թուղթ	369 37 1/2
5% Հելլենական	275
Զէք Լոնդրայի վրայ	25 16

ԲԱՐԻԶ ԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 22 Մարտ, ժ. 10 վ. 30 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %	109 10
Օսմանեան քանոնիք Սերի Դ	15 10
Եգիպտական	351 25

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Տարեմուտի երեկոյեան 7րդ ժամին Մայր Աթոռոյս միաբանութիւնը ընթրիքից յետոյ գնաց Վեհարան և խմբուեց Զմեռնային դահլիճում, ուր պատրաստած էր կաղանդի սեղանը. Վեհ. Հայրապետը ուղեկցութեամբ Գեր. Տ. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոսի մտաւ դահլիճ և յատկացեալ տեղը կանգնելով՝ ողջունեց միաբանութեանս և ասաց օրհնեց սեղանը. սեղանի ճակատին գահաւորակի վերայ բազմեց Ն. Վեհափառութիւնը. սեղանի շուրջը, յաջմէ և յահեկէ Վեհափառ Հայրապետի՝ տեղի կալան միաբանք։

Վեհափառ Հայրապետը շնորհաւորելով նոր տարին, որքան յիշում ենք ասաց.

«Սիրելի եղբարք,

«Ի մէջ ուրախութեան և տրամութեան վարանեալ՝ շնորհաւորեմ զտարեմուտս այս։ Ի մէջ ուրախութեան, որովհետեւ գոհութիւն Աստուծոյ եկեղեցական ինչ ինչ կրճատներից գործեր յաջողութեամբ վերջացան. ի մէջ տխրութեան, վասն զի դպրոցական գործը, որի համար Տփխիսում չատ աշխատեցի, և յոյս ունէի գէթ այս երեկոյ աւետեաց լուր հաղորդել, այս բաղդաւորութեան դեռ չարժանացայ(1)։ Բայց այս տխրութիւնը յուսանք յԱստուած, որ յուրախութիւն փոխուի, որովհետեւ Սողոմ իմաստասէրն կ'ասէ. «Ամենայն իրաց վախճանն է գովելի». իսկ Իսմանուէլ Թեսաւրոս գրեցիկ Սողոմի խօսքը կրկնելով կասէ. «Զսիւն՝ երեկոյն, և զգործն՝ վախճանն առնէ գովելի»։

«Հաւատք և յոյս ունենանք առ Աստուած և ջերմ հպատակութիւն առ Օգոստափառ Կայսրն, և մեր փափագանց լրումն կը տեսնենք։ Աղօթենք առ Աստուած, որոյ ի ձեռն են սիրաք թագաւորաց, տալ Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսերն երկար կեանք և հայրական գութառ ազգս Հայոց, մեր տրամեալ սրտերն ուրախացնելու՝ բանալով մեր վակեալ հոգեւոր դպրոցների դռները առաջի մանկանց սուրբ եկեղեցւոյն, որոյ մէջ մշտամուռնչ աղօթք են բարձրացնում առ երկնաւոր թագաւորն, և գոհութիւն՝ վասն ամենայն իրաց, զոր յանցեալսն վայելած ենք և պիտի վայելենք յապագայիս»։

Երգեցիկք եղանակեցին. «Երկինք և երկիր գոհանան զքէն Տէր» օրհներգը։ Միաբաններից մինը գրաւոր ճառ կարդաց. յետոյ երգիչք երգեցին «Ով Տէր Աստուած, լուր մեր բարեաւ» երգը։ Ապա Գեր. Մեկրտիչ Ս. Արք. Բաբամեան և Գեր. Սերովբէ Եպիսկոպոս ի դիմաց Միաբանութեան բարեմաղթութիւններ ուղղեցին Վեհ. Հայրապետին։

Յաւարտ սեղանին, Նորին Վեհափառութիւն օրհնեց սեղանը, բարեմաղթութեամբք շնորհաւորեց Նոր Տարի, յետ որոյ միաբանք կարգաւ համբուրեցին Վեհափառ Հայրապետի Ս. Աջը և ցրուեցին ուրախ տրամադրութեամբ։

—

Գանձակեցի եղբարք Խահակեանք ի յիշատակ իւրեանց հանգուցեալ Բագարատ եղբօր նուիրել են երեք հարիւր ռուբլի, մի հարիւրը մայր Աթոռոյ Ճեմարանին, մի հարիւրը տեղւոյն աղքատանոցին և մի հարիւրը տեղւոյն Ս. Յովհաննէս եկեղեցւոյն։

—

26 դեկտ. Սինօդը ի նկատի ունենալով Նոր Նախիջեւանի և Բեսարաբիոյ Թեմի կոնսիստորիայի յայտարարութիւնը, որով յիշեալ Կոնսիստորիան յայտնում էր թէ, Օրհէյ քաղաքացի կալուածատէր Յարութիւն Կարապետեան Պալեօղ իւր հարազատ եղբօր մահից յետոյ նաչ քաղաքում ամուսնացել է իւր հարազատ եղբօր այրոյ հետ պսակադրութեամբ Լեւոն անուն քահանայի Սուչչա քաղաքին Աւստրիոյ և շրջաբերականով պատուիրած է Բեսարաբիոյ Թեմի հոգեւորականաց ծնողները մկրտել բայց պսօրինի արձանագրել, և պսակի վկայականը ստանալով ուղարկել կոնսիստորիային,—ծանոյց Պատրիարքին Հայոց Կ. Պոլսոյ, որ Նորին սրբազնութիւնը յետ ստուգելոյ՝ եկեղեցական կանոններով վարուի յիշեալ Լեւոն անուն քահանայի հետ ուշնչացնի ապօրինաբար կատարուած պսակի արձանագրութիւնը՝ հռչակելով ի լուր ամենից ի խրատ և ի գգուշութիւն այլոց։

(Աբբաթ)

ԱԽՈՒՅԹՈՒՅԻՑ հետեւեալն են գրում մեզ։ «Փետրվարի 14ին, երբ լուր տարածվեց թէ վերջապէս հայր Խորէն Ստեփանէն Սինօդի հրամանին հնազանդվելով վերջնականապէս պատրաստվում է գնալ իր աթոռանքի տեղը, Հաղբատ վանքը, ժողովրդի խուռն բազմութիւնը հաւաքվեց եկեղեցու գաւթում, յաջորդարանի շինութեան առվեր։ Ներկայ էին բազմութեան մէջ և օտարազգիք։ Եկան և հաշտարար դատաւորը և գնդապետ Բրէվերն և ուրիշ աստիճանաւորներ, որոնք, տեսնելով ժողովրդի վիշտը, իրանք էլ չը կարողացան անտարբեր մնալ։ Նրանք հրաւիրեցին յաջորդարան տեղիս գաւառապետին և խնդրեցին որ հեռագրէ Նորին վեհափառութեանը, իմացնելով ժողովրդի վշտալի տրամադրութիւնը և որովհետեւ ժողովուրդը այդ մասին արդէն ուղարկած է 4 հոգի պատգամաւորներ Էջմիածին, ուստի հեռագրի մէջ խնդրվում էր վեհափառից, ժողովրդի վշտալի յուզմունքին վերջ դնելու համար, դադարեցնել հայր Խորէնի գնալը։ Փոքր ինչ հանգստացած, ժողովուրդը անհարեր և սրտաբորբ սպասում է Էջմիածնի անօրինութեանը»։

—

ԴՈՒՇԵԹԻՑ մեզ գրում են որ փետրվարի 20ին այդտեղի եկեղեցում մեծ հանդիսով կատարվեցաւ Վարդանանց տօնը։ Եկեղեցին լի էր բազմութեամբ, ներկայ էին նոյնպէս քաղաքային դպրոցի այլազաւան աշակերտները դպրոցի տեսչի Ի. Դ. Աբաչիձէի հետ։ Հայր գործակալը սուրբ Վարդանի հանդիսաւոր և պատարագը կատարելուց յետոյ դիմեց ժողովրդին մի կարճ ատենաբանութեամբ վրաց լեզուով, որով բացատրեց Վարդանանց տօնի նշանակութիւնը։ Դուշէթի էնսաֆների գլխաւորը նախընթաց օրը մեծ ջանք դրեց ժողովրդին հանդիսելու, որ տօնի օրը մեծ թուով ներկայանան եկեղեցի։

—

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐՊՕԼԻՑ հետեւեալը։ «Փետրվարի 20ին Թատերասէրների խումբը դիտաւորութիւն ունի ներկայացնել Սուրբ-Նշան եկեղեցու օգտին, ինչպէս որ երեւում է ոմիչներից, «Վարդան Մամիկոնեան» ողբերգութիւնը 3 արարածով, հեղ. Կարինեանցի, և «Պրիկաչչիկը չկապում» Թարգ. վոդ. Միրզաեանցի։ Բացի սրանից խումբը կամենում է ներկայացնել և կենդանի պատկերներ։»

—

Ամսից 22ին, շաբաթ օր, Թիֆլիսի ժողովարանում կայացաւ կօնցէրտ յօգուտ հայոց թատրօնական Փոնդի։ Կօնցէրտին մասնակցում էին՝ Տ. Արտէմիէվա, Օր. Սատխօվսկայա, Պ. Պ. Ադամեանց, Նահապետեանց, Կարնօվիչ և այլք։ Ժողովուրդը լցրել էր ժողովարանի դահլիճը։ Պ. Ադամեանց կարդաց իր մի քանի բանաստեղծութիւնները և Նէկրասովի մի ոտանաւորը թարգմանօրէն։ Առհասարակ հասարակութիւնը չատ բաւական մնաց կօնցէրտից։ Ժողովուրդը մասնակցողներից իւրաքանչիւրին վարձատրում էր ծափահարութիւններով։ Կօնցէրտից վերջը սկսվեցաւ պար, որ տեւեց մինչեւ գիշերվայ չորս ժամը։

—

Մայրաքաղաքների լրագիրները հաղորդում են Ակակօվի մահուան առիթով, որ այժմ գոյութիւն ունի մի նոր «կուսակցութիւն սլավիանօֆիլների», որի ուղղութիւնը խիստ ազգասիրական է և որը օրէ ցօր ընդլայնանալով, ընդունում է իր մէջ ռուս ինտելլիգէնցիայի ամենալաւ ոյժերը։ Նովէյ Վրէմա լրագիրը խօսելով այդ մասին, յայտնում է, որ այդ չատ ուրախալի երեւոյթ է։

—

Կարճ միջոցով Պետերբուրգի մէջ կը հիմնվի արխաղոռնեան վարժարան կանանց համար։ Սրից ու Թրից լեղապատառ եղող հայ կնոջն էլ այդպիսի վարժարաններ մեծ օգուտ կը տային։

—

Փետրվարի 20ին վախճանվեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ մեր ամբողջ երկրում յայտնի գերմանացի հնագէտ և բնագէտ Ֆրիդրիխ Բայէրն։ Այդ եռանդոտ մարդը, այդ անխոնջ աշխատողը իր կեանքի կէսը նուիրած էր Կովկասի հետազօտութեանը։ Տարիների ընթացքում, տարվայ ամեն եղանակին, մեր երկրի սարեր ու ձորերն ընկած, գաւազանը մի ձեռքում, մուրճը միւս ձեռքում, նա հաւաքում էր մետաղներ, դրամներ, հնութիւններ, փորում էր հին գերեզմաններ ու նախապատմական բլուրներ, կազմում էր այլեւայլ ժողովածուներ, հարստացնում էր նրանցով մեր կովկասեան Մուզէումը, իր ամեն մի գիւտի մասին անմիջապէս հաղորդում էր եւրոպական գիտական հրատարակութիւններին և քիչ չնպաստեց եւրոպացիներին մեր երկրի հետ ծանօթացնելուն։ Իր կեանքի ժամանակ չատ քիչով բաւականանալով, նա ապրում էր կառավարութիւնից իրան նշանակած աննշան թոշակով և վախճանվեց աղքատութեան մէջ։

—

Փետրվարի 22ին, շաբաթ օրը, կատարվեց Թիֆլիսում մեր կովկասեան հնագէտ Ֆրիդրիխ Բայէրնի թաղման հանդէսը։ Յուղարկաւորութիւնը ներկայ էին ամեն ազգութիւններին պատկանող հանգուցեալի բարեկամներ։ Հանգուցեալը այնպիսի չքաւորութեան մէջ մեռաւ և ամեն միջոցներից զուրկ թողեց իր քրոջը, որ թաղմանը ներկայ գտնվածները սիրեցին իրանց մէջ հանգանակութիւն հաւաքել։ Բայէրն ծնվեցաւ 1817 թ-ին, Աւստրիայի Կրօնշտադ քաղաքում, ուրեմն 69 տարեկան էր։

(Մշակ)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԵՐ

«ԱՐԵՒԵԼՔ»ի

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ ՑԻՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

ՄՈՍԿՈՒԱ, 1/13 մարտ

Ձեր պատուական լրագիրը, որպէս և այլ խմբագրութիւնք հայ թերթից ի կ. Պոլիս՝ արդէն լսած են այն հանդիսի մասին, որ տեղի է ունենալու առաջիկայ ապրիլի 17|29 Լազարեան ձեմարանը՝ մեր հռչակաւոր հայերենագէտ Մկրտիչ Էմինի յիսնամեայ արդիւնաւէտ գիտնական և մանկավարժական գործունէութիւնը մեծարելու։ Էմինի անունը այնչափ յայտնի է, նորա երկասիրութիւնք այնքան ծանօթ են թէ՛ հայ և թէ՛ օտարազգի քանասիրաց, որ յայլ դէպս հազիւ թէ հարկ լինէր երկարօրէն խօսիլ՝ հայերենագիտութեան (բառիս ընդարձակ նշանակութեամբ) նորա մատուցած ծառայութեանց մասին։ Բայց ի նկատ առնելով, որ նորա բազմաթիւ գրուածներէն և հրատարակութիւններէն մեծագոյն մասը ռուսերէն է (թէեւ սմանք ֆրանսերէն և հայերէն), որ մանաւանդ մեր Ցաճկատպատակ եղբարց դժուար մատչելի է, առաջիկայ հանդիսի առթիւ աւելորդ չ'համարեցի Աբեռնէի ընթերցողաց մի համառօտ գաղափար տալ Էմինի գիտնական երկասիրութեանց մասին։

Նախապէս երկու խօսք յինամեակի վերաբերմամբ։— Այդ հանդէսը կատարելու շարժառիթներէն մէկն էր ի միջի այլոց՝ մի թարգմանութիւն, զոր ի լոյս ընծայեց Էմին 1836 թուին, ճիշդ 50 տարի առաջ, և թէպէտ այդ երկը ուղղակի յարաբերութիւն չունի նորա մասնագիտութեան հետ, բայց և այնպէս չատ նշանաւոր է ա՛յլ հանգամանքներով։ 1829 թուին Էմին՝ տակաւին 15–16 ամեայ պատանի՝ գալիս է Կալկաթայից, ուր նա ուսանում էր Աւդալեանի և Թաղիադեանի առաջնորդութեամբ, Մոսկուայի Լազարեան ձեմարանը — առանց մի խօսք իմանալու ռուսերէն։ Հազիւ անցնում է 5–6 տարի և դոյն իսկ պատանին աշխատակցութեամբ իւր ընկերներէն մէկի հրատարակում է ռուսերէն՝ ռուս հասարակութեան համար՝ ժամանակի ականաւոր ֆրանսիացի մատենագիր Վիլէնի Մինչեւ Դարուց գրականութեան պատմութիւնը — 3 հատոր (ֆրանս. 2 ստուար հատոր), Մոսկուա 1836։ Այն ժամանակի ռուս լրագիրք մեծ գովասանութեամբ խօսեցան թէ՛ թարգմանութեան և թէ՛ մանաւանդ հնդկաստանցի հայ երիտասարդի մասին, որ ծով ու ցամաք չափելով (Էմին նաւով էր եկել Ռուսաստան՝ անցնելով Ովկիանոսը, Ատլանտիկը, Գերման ու Պալտիկ ծովերը) եկել է Ռուսիա՝ ճոխացնելու ռուս գրականութիւնը եւ ծանօթացնելու Ռուսերին Եւրոպայի ընտիր հեղինակութեանց հետ։ Տես «Տելեսկօպ» ռուս օրագիրը հրատ. ի Մոսկուա, 1836։

Բուն հայերենագիտութեան վերաբերեալ Էմինի բազմաթիւ երկասիրութիւններէն մանաւանդ արժանի են ուշադրութեան հետեւեալք՝ ըստ կարգի բաժանմանց.

1. Զեռնարկ.— Տակաւին ի սկզբան իւր մանկավարժական գործունէութեան՝ իբր ուսուցիչ հայերէն լեզուի Լազարեան ձեմարանը, Էմինը առանձին ուշադրութիւն դարձրեց օրինաւոր և լուրջ աւանդութեան վրայ թէ՛ կենդանի խօսքով և թէ՛ ընտիր ձեռնարկաց հրատարակութեամբ, որք մինչեւ այսօր անգամ՝ 40 տարի յետոյ, օրինակելի կարող են համարուիլ։ 1847 թ. Էմին հրատարակեց իւր՝ մինչեւ այն օրը գրչագիր մնացած հայերէն լեզուի Քերականութիւնը — գիւրին եւ հասկանալի ոճով, յարմարեցրած աշակերտաց պահանջմանց և զերծ այն բոլոր ծանրաբեռուկ մանրամասնութիւններէն (օրին. Սալլանթեանի Քերականութիւնը), այք միայն չփոթել կարող են աշակերտի միտքը։— 1849 թ. նա ի լոյս ընծայեց «Ընտիր հատուածք» խորագրաւ ստուար հատոր (գրոց լեզուով) — ծաղկաքաղ ընտիր ընտիր հայ մատենագրաց պատշաճաւոր լուսաւորութեամբք և պատուական բառգրքով ի Հայէ ի Ռուս։

Հայոց լեզուի աւանդութեան վրայ ունեցած յիշեալ տեսակետի շնորհիւ յաջողեցաւ Էմինին հիմն դնել հնագոյն Հայոց դպրոցում (Լազ. ձեմ.) այն ուղղութեան, որ գրոց լեզուի հիմնաւոր ուսումնասիրութեամբ, հայ դպրութեան ընտիր օրինակաց յարդելով ու պաշտելով և միշտ նոցա հետեւելու ձգտելով կամէր իրագործել իւր գլխաւորագոյն նպատակներէն մէկը։ Իսկ այս ուղղութիւնը սակաւ առ սակաւ ծաղկելով՝ իւր արժանաւոր պտուղն արտադրեց գիտնական գրականութեան մէջ՝ առանցնելով բազմաթիւ գրուածներ, քննութիւնք, որոց առաջին փորձերը դարձեալ իրեն՝ Էմինին կը պատկանին։ Այսպիսի են

2. Բնականք— գիտցաբանութեան, պատմութեան և դպրութեան պատմութեան վերաբերեալ։

—«Վէպք հնոյն Հայաստանի»— 1850 (յետոյ 1881 աւելի ընդարձակ ռուսերէն), ուր առաջին անգամ յաղոյց Էմին հայ վէպերի և ազգային երգերի խնդիրն և այսպէս աչող լուծեց,—դարձաւ այդ խնդրի հիմնաքարը, որոյ առթիւ և ազդեցութեամբ հետզհետէ լոյս տեսան այլեւայլ լեզուներով յօդուածներ, թարգմանութիւնք ևն։ Այդ երկը արդարև դարագլուխ կարող է համարուիլ հայ քննական գրականութեան մէջ։ Բայ ի «Բազմավէպ» յօդուածէն (1850–51) և Հ. Յովս. Գաթրճեանի գրքոյկէն «Պատմութիւն մատենագրութեան Հայոց» (1851. Վիեննա), արժանի են յիշելու— Journal asiatique-ի մէջ լոյս տեսած հանգուցեալ Դիւլօրիէի յօդուածը— Etudes sur les chants historiques et les traditions populaires de l'ancienne Arménie, d'après une dissertation de M. Emin 1852». և յետ սակաւուց դարձեալ նոյն գիտնականի մի այլ յօդուածը Revue des Deux Mondes օրագրում 1852 թուին Les chants populaires de l'Arménie որ իւր ժամանակին թարգմանուեցաւ նաև ռուսերէն։

—«Հայ նշանագրաց մասին»—(1858 թ. ռուսերէն՝ հանգուցեալ Պրիւդոմ ֆրանսիացու աշխատութեամբ թարգմանեալ ֆրանսերէն)։

—«Ընդհանուր տեսութիւն Հայոց հեթանոսական կրօնի»—(1864 ռուսերէն, թարգմանեալ ի ֆրանս. ձեռամբ Ոգաստէրի ի Փարիզ և ի ֆրանս. ի հայ՝ Կ. Պոլիս։

—«Հայոց Վահագն վիշապաքաղ է Ռիգ-Վէդայի Ինդրա-Վրիթրականը»— 1873—ռուսերէն։

—«Հայկազանց հարստութեան ցուցակը»—1884 ռուսերէն՝ թարգ. ի հայ՝ «Արձագանք»։ . . . Եւ այլք շատ նշանաւոր են գիտնական քննութեան համար՝ իբրեւ առաջին և շատ աչող փորձեր մինչեւ ցայսօր սակաւածանօթ խնդրոց։

3. Հրատարակութիւն մի շարք հայ մատենագրաց և պատմագրաց, որոց մեծագոյն մասն առաջին անգամ են լոյս տեսած. Յովհաննէս Կաթողիկոսի պատմութիւնը—1853։

—Թուղթ Ղազարայ Փարպ. առ Վահան Մամիկոնեան (առաջին անգամ) 1853։

—Պատմութիւն Ազուանից Մովսիսի Կաղանկատուացւոյ (առաջին անգամ) 1860.

—Ժամանակագրութիւն Մխիթարայ Այրիվանեցւոյ (առաջին անգամ) 1860։

—Տիեզերական պատմ. Վարդանայ Բարձրբերդեցւոյ (առաջին անգամ) 1861։

—Պատմութիւն Տանն Սիսական ըստ Եղիշանոսի Օրբէլեան—1861։

4. Ընդէք Բաբէմանուրեան հայ նշանաւոր պատմագրաց (բայց ի մէկէն՝ բոլորն առաջին անգամ) ռուսերէն նաև ֆրանսերէն՝ այն ճշգութեամբ, այն խորին թափանցմամբ հայ մատենագրի մտքի խորքերը, այն ճաշակագիտական եւ ճարտարագիտական ոճով, վերջապէս այն թանկագին ծանօթութեամբք, լուսաբանութեամբք և կարեւոր յաւելուածովք, որք ի վաղուց հետէ Էմինի բոլոր թարգմանութեանց յատկանիշն են դարձել։

Մովսիսի Խորենացւոյ՝ Պատմութիւն Հայոց (թարգմ. ի ռուս) Մոսկուա 1858։

Տիեզերական պատմ. Վարդանայ Բարձրբերդեցւոյ (թարգմ. ռուս) 1861։

Ասողիկ—Ընդհ. Պատմ. (ռուս.) 1864

Փաւստոս Բուզանդացի—ֆրանսերէն՝ Լանկլուայի հաւաքածոյի մէջ, Փարիզ 1867։

5. Հայ Եկեղեցական Մատենագրութիւն մէջ Էմինը զարթեցրեց մի վերին աստիճանի հետաքրքրաշարժ խնդիր—անվաւեր երեսածոյ Les apocryphes մասին որոց թիւը շատ մեծ է և որոց կարեւորութեան վրայ նորանից առաջ համարեա ոչ ոք ուշադրութիւն չէր դարձրել։ Ցեսնելով թէ որքան մեծ գին ունեն այդ տեսակ յիշատակարանները գիտութեան համար և ցանկալով ծանօթացնել գիտնական մասնագէտին հայ ապօկրիֆների հետ, որոց մէջը կան շատ կարեւորները, Էմինը 1875 թուից սկսում է սակաւ առ սակաւ ի լոյս ընծայել նոցա թարգմանութիւնը—6–7 հատ, որք մեծ համակրութեամբ ընդունուեցան մասնագէտներէն.

Այսպիսի են —«Պատմութիւն յաղագս փոխման Ս. Աստուածածնի և պատկերք նորա, գրեալ յձեռամբ Յովհաննու Աւետարանչի»։

—Պատմութիւն վասն Սրբոց Թադէոսի և Բարթուղիմէոսի՝ առաքելոցն Հայոց — 1877 թ.

—«Հանգիստ երանելւոյն Յովհաննու»— 1877 թ. (լոյս տեսեալ վաղագոյն, քան նոյն իսկ թուին հրատարակեալ ի Հ. Յովսէփայ Գաթրճեան նոյն անուն յիշատակարանը, որ սակայն առաջարկի ո՛չ իբրև ապօկրիֆ, այլ «ստուգեալ իբրև վաւերական». Վիեննա, 1877)։

—Նորագիւտ Հայ pendant-ի «Թուղթն Պուբ եայ Լենտուլայ առ Ներսէսայն Հռոմայ վասն Յիսուսի» – 1878։

—Հատած մի ի «Չատագովութենէ Արիստիդեայ Աթենացւոյ՝ Քրիստոնեայ փիլիսոփայի . . .» 1879, և այլք ոմանք։

Եկեղեցական Մատենագրութեան կարգէն են նաև .— Լամբրոնայոց հռչակաւոր ատենաբանութեան գեղեցիկ թարգմանութիւնը —1865 թուին։ Այս գրուածը միանգամայն զարմացրել էր ռուս գիտնական կաճառը, ուր նա կարդացուել էր առաջին անգամ. ի միջի այլոց՝ այս օրերս վախճանեալ ականաւոր ռուս մատենագիր Աքսակովը անդամ) ռուսերէն նաև ֆրանսերէն՝ այն ճշգութեամբ, այն խորին թափանցմամբ հայ մատենագրի մտքի խորքերը, այն ճաշակագիտական եւ ճարտարագիտական ոճով, վերջապէս այն թանկագին ծանօթութեամբք, լուսաբանութեամբք և կարեւոր յաւելուածովք, որք ի վաղուց հետէ Էմինի բոլոր թարգմանութեանց յատկանիշն են դարձել։

Մովսիսի Խորենացւոյ՝ Պատմութիւն Հայոց (թարգմ. ի ռուս) Մոսկուա 1858։

Տիեզերական պատմ. Վարդանայ Բարձրբերդեցւոյ (թարգմ. ռուս) 1861։

Ասողիկ—Ընդհ. Պատմ. (ռուս.) 1864

Փաւստոս Բուզանդացի—ֆրանսերէն՝ Լանկլուայի հաւաքածոյի մէջ, Փարիզ 1867։

5. Հայ Եկեղեցական Մատենագրութեան մէջ Էմինը զարթեցրեց մի վերին աստիճանի հետաքրքրաշարժ խնդիր—անվաւեր երեսածոյ Les apocryphes մասին որոց թիւը շատ մեծ է և որոց կարեւորութեան վրայ նորանից առաջ համարեա ոչ ոք ուշադրութիւն չէր դարձրել։ Ցեսնելով թէ որքան մեծ գին ունեն այդ տեսակ յիշատակարանները գիտութեան համար և ցանկալով ծանօթացնել գիտնական մասնագէտին հայ ապօկրիֆների հետ, որոց մէջը կան շատ կարեւորները, Էմինը 1875 թուից սկսում է սակաւ առ սակաւ ի լոյս ընծայել նոցա թարգմանութիւնը—6–7 հատ, որք մեծ համակրութեամբ ընդունուեցան մասնագէտներէն.

Այսպիսի են —«Պատմութիւն յաղագս փոխման Ս. Աստուածածնի և պատկերք նորա, գրեալ յձեռամբ Յովհաննու Աւետարանչի»։

—Պատմութիւն վասն Սրբոց Թադէոսի և Բարթուղիմէոսի՝ առաքելոցն Հայոց — 1877 թ.

—«Հանգիստ երանելւոյն Յովհաննու»— 1877 թ. (լոյս տեսեալ վաղագոյն, քան նոյն իսկ թուին հրատարակեալ ի Հ. Յովսէփայ Գաթրճեան նոյն անուն յիշատակարանը, որ սակայն առաջարկի ո՛չ իբրև ապօկրիֆ, այլ «ստուգեալ իբրև վաւերական». Վիեննա, 1877)։

—Նորագիւտ Հայ pendant-ի «Թուղթն Պուբ եայ Լենտուլայ առ Ներսէսայն Հռոմայ վասն Յիսուսի» – 1878։

—Հատած մի ի «Չատագովութենէ Արիստիդեայ Աթենացւոյ՝ Քրիստոնեայ փիլիսոփայի . . .» 1879, և այլք ոմանք։

Եկեղեցական Մատենագրութեան կարգէն են նաև .— Լամբրոնայոց հռչակաւոր ատենաբանութեան գեղեցիկ թարգմանութիւնը —1865 թուին։ Այս գրուածը միանգամայն զարմացրել էր ռուս գիտնական կաճառը, ուր նա կարդացուել էր առաջին անգամ. ի միջի այլոց՝ այս օրերս վախճանեալ ականաւոր ռուս մատենագիր Աքսակովը քոֆը բաւական խօսք չէր գտնում արժանապէս գովելու ժ. դարու հայ եկեղեցականի կրկնակ լեզուն, ազգու ոճը, վսեմ գաղափարները՝ հմուտ թարգմանչի շնորհիւ այնպէս գեղեցիկ արտայայտած ռուս թարգմանութեան մէջ, կարծես թէ Լամբրոնացին ռուսերէն խօսած լինէր իւր ատենաբանութիւնը։

Վերջապէս Էմինի երկասիրութեանց կարեւորագոյններէն մէկն է և Նաբոկոնի լիակատար թարգմանութիւնն ի ռուս լեզու, որ ըստ լեզուի դժուարութեանց, ըստ ատուածաբանական նրբութեանց և վսեմ բանաստեղծական ոճին ու բովանդակութեան թերեւս բացի Նարեկացու ոգելից ողբէն, չունի հաւասարն ամբողջ հայ Մատենագրութեան մէջ։ Եւ հայ հաւատի, սրտի և հանճարի այդ սուրբ գանձարանը՝ շնորհիւ Էմինի, մատչելի է այժմ և օտարազգի քանասիրաց։

Գր. Խ.

ՇԱՀԱՒՈՐ ԱԶԴ

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՐՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ

Ազդէն յայտնի է թէ՝ սոյն վիճակահանութիւնն երկու ամիսը անգամ մը տեղի կ'ունենայ արքունի Փողերանոցին մէջ։

Այս անգամ 97րդը պիտի քաշուի յառաջիկայ ըստ եւրոպական 1886 ապրիլ 1ին—ըստ յունաց մարտ 20ին—և 500 թիւեր պիտի շահին. առաջին պարգեւն է այս անգամ 600,000 և երկրորդը 60,000 Ֆրանք։ Ասոնցմէ զատ 48 թիւեր ևս այլ և այլ մեծ պարգեւներ, իսկ մնացեալ 450 թիւերն 400 ական Ֆրանք պիտի շահին։

Շահելի գումարին ամբողջն ստանալու իրաւունք ունեցող բաղդատմամբ գինն է 7 1/2, կէսինը 5 և մէկ քառորդինը 3 դահեկան։ Ասոնց մայրերը Եսայեան և Զարիփի դրամատուններն են։ Գաւառներէն հնչուն դրամի տեղ ֆոլ և ամեն լեզուէ նամակ կ'ընդունուի։

Ի վաղուց շնայուած բաժնեթղթոց թիւերն առանց ոչ և է փոխարինութեան կը նայուին։

Ցանձնարարութիւնք ընդ փոխ կը կատարուին։ Դիմել ուղղակի առ

ՄԱՐԳԱՐ Ց. ԳՈՒԼԱԳՍԸՐՋԵԱՆ

Ղալաթիա, Կամուրջի գլուխ թիւ 33.

Օ. ԲԱՆԹԷՈՆ

ԳԱԼՖՕՔՈՒԼՕ

ԵՂՐԱՐՔ

Գալֆօքուլօ եղբարք պատիւ ունին ծանուցանել Հասարակութեան թէ իրենց վաճառատունը փոխադրուած է Կալաթա Սէրայի դէմ, թիւ 206 նախկին «Կրօսպագ» վաճառատունը

Այս առթիւ, ամեն մտասքեղինաց, թաւշեղինաց, ճերմակեղենաց և ուրիշ առարկայից գիները մեծապէս զեղչուած են։

17—20

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՈՆՍՈՒԻՏԻ ՊԱՐՏՔԻ

1881 Դեկտեմբեր 8|20 ի Կայսերական Իրատէով թողեալ հասոյթք

Դ. ՏԱՐԵՇՐՋԱՆ–ՓԵՏՐՈՒԱՐ 1886

	ՀԱՍՈՅԹՔ	Զուտ հասոյթ գաւառ. վարչ. Ղրուշ		Ընդհ. անօրէնութեան կողմէ վճարեալ ծախք Ղրուշ		ԶՈՒՏ ՀԱՍՈՅԹՔ Գաւառական եւ կեդրոնական վարչութեան Ղրուշ		Օսմ. ոսկի		Նախորդ ամիսներէն Օսմ. ոսկի		Գումար մինչեւ 1886 փետր. 28 Օսմ. ոսկի	
Վեց անուղղակի տուրք	Մաքսաւոր (յետանեալ տրոց գանձումն)												
	Աղ												
	Դրոշմ	8,121,783	67	240,455	60	7,881,328	07	76,915	97	718,065	32	739,981	2
	Ոգելից ըմպելիք												
	Զինարան												
	Մետաքս												
Մասնաւոր	Հասոյթք Բէժիէն(*)	...	...	...	...	...	...	...	...	750,000	...	750,000	
Հատուցմունք	Հարկ Պուլկարիոյ փոխանակեալ ծխախոտի տասանորդէն առնուելիք 100,000 Օսմ. լիրայով՝ մինչեւ ցարոշումն յիշեալ հարկին	524,601	82	...	...	524,601	82	5,194	60	105,704	99	110,899	
	Յաւելուած կիպրոսի հասութից փոխանակեալ ծխախոտի տասանորդին յաւելուածով կամ Մաքսատան վրայ փոխանակագրեալ գրանցիք 130,000 Օսմ. լիրայով	6,500,000	...	...	...	6,500,000	...	65,000	...	65,000	...	130,000	
Զանազան հատուցմունք	Արեւելեան Ռումելիի տարեկան հարկէն	...	...	...	...	...	...	...	...	107,916	70	107,916	
	Թէմպէքիի տուրք, Մաքսատունէն փոխանակագրով վճարելի	2,500,000	...	...	...	2,500,000	...	25,000	...	25,000	...	50,000	
	Սերպիոյ, Գարատաղ, Պուլկարիոյ և Յունաստանի բաժին ինկած պարագ	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	
	Գումար	17,646,385	49	240,455	60	17,405,929	89	172,110	57	1,766687	01	1,938797	
Զանազան	Պատրաստ դրամներէ առնուած շահ	95,457	32	...	...	95,457	32

ՖԷՆԻՔՍ PHOENIX FIRE OFFICE

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԵՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ ԿԱՆՑՆԻՆ 900,000 Անգլ. Ոսկի, ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ, ԱՒԵԼԻ ՔԱՆ 1,000,000 Անգլ. Ոսկի

ՎՆԱՍՎՃԱՐԵԱԼ ՄԻՆՉԵՒ 31 Դեկտեմբեր 1885 14,000,000 Անգլ. Ոսկի

ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1782ԻՆ

Ֆէնիքս իւր տէրանց մէջ ունի Անգլիոյ ամենէն հարուստ և հանրածանօթ դրամատեարքն, այսու ընծայելով ամենակատարեալ ապահովութիւն իւր յաճախորդաց։ Ապահովագրութիւն ընդդէմ հրդեհի ամեն տեսակ անշարժ կարասեաց, կարասեաց և ապրանաց վրայ, ի Ղրիս և յարուարձանս, կատարեալ ձեռամբ ստորագրելոցս որք լիակատար զօրութիւն ունին անմիջապէս և առաւտաձեռնութեամբ կարգադրելու ղնամներն և կորուստներն։

Թիւ 8 Մէհմէտ Ալի փաշա խան, Ղալաթիա — Գործակատարք ՔԼՈՆԱՐԻՏԻՍ ԵՒ ԸՆԿ.

ՀՐԴԵՀԻ ԹՇՆԱՄԻՆ

Բացարձակ ապահովութիւն վաւերացեալ ի տիեզերս, շնորհիւ ՀԼՅՈՒՍԱՐՏ ի կատարելագործեալ կրքնատներու որք ձեռքով կը գործածուին։

Գործածելու եղանակն. Շիշը կրակին վրայ նետեցէք այնպէս որ կոտրի. դուրս ելնող կաղն անմիջապէս կը մարէ բոցերը։

Հարիւրաւոր հրդեհներ այսպէս մարած են շնորհիւ այս կրքնատներուն։

Ցոյժ չահաւէտ պայմաններ ու չափաւոր գիներ։

ՄԹԵՐԱՆՈՑ ի Մէհմէտ Ալի փաշա խան, Թիւ 8 և Զադվադճիլար Եօղուշու, Թիւ 35

ԱՊՍԱՆՍ

(ՆՕՔԹԻՒՆ)

Աղգային տարանդաւոր երաժիշտ-երէն Մեծ. Մանեփան Էֆ. Սուրէնեան կոյն վերնագրով երաժշտական կատարագ պատրաստած է դաշնակի համար։ Ապսանի գողտր ու սրտայոյզ եղանակը ատաւ կը բերէ արգոյ հեղինակին շնորհութեան, որ գործն վստահ դնը թէ մեծ ընդունելութիւն պիտի ունենայ ամեն երաժշտասիրաց կողմէ և ամեն սրահներու մէջ։

1 կը ծախուի Ս. Սանտալեան վաճառատունն, Կալաթա, Թիւնէլին կից, թիւ 18, ինչպէս նաև Բերա, Պալաթի, Գումկնափիէր և Ս.տամ վաճառատունները։

ԻԼԱՆ

ՊԱՊՊ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Ճշնուտը ճենապը միւլիւքեանէ ի-լէն միւպոյեա օլունճաղը էվվէլճէ լան գրընան հաթապ իլէ քէմիւրէն հաթապին պէհէր չէքիսի եանի չատա չէքինին խուսաք օլան պէհէր բարթըլըսը օն տէօրթ, վէ քէմիւրին պէհէր եիւզ ճէտա գըյէսի եիրմի ալը պուչուգ զուրուշա թալիպի էօհ-քէսինտէ օլուա, իշպու մարտը լուսին օն իլինճի չարշէնպիհ կիւնի գա-նը գաթիսի վերիւլէճէկինտէն վէ օն չինճիս բէնչէնպիհ կիւնիս տախի էդաբրուր խէն ֆիյաթընան եիւզ-է պէշ թէնգկի գապուլ օլունճա-նան իթիպա թալիպ օլանլարըն լէ-բզիմաթը սւմուտիյէ տաիրէսինէ կէլ-լէրի իլան օլունուր։

8 մարտ, 1886

2—3

ԻԼԱՆ

ՊԱՊՊ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Իքինճի օրաուլ Հիւմայունը մեր-զ վէ մեվգիլինտէ միւթէհայիւտ ճէ-ւուր ճէնապը միւլիւքեանէնին պին չ եիւզ իքի սէնէսի նիսանը իպթի-տարնան իթիպարէն մուզթաղ մու-եէնաթը լանմիէսինի իթիպա թա-պ օլանլարը մագամը Սէրասքէրի վաղիմաթը ուսմուտիյէ տաիրէսինէ լմէլերի իլան օլունուր։

8 մարտ 1886

2—3

ԻԼԱՆ

ՊԱՊՊ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Պին իչ եիւզ իքի սէնէի բուսիյէսի ուրքնտա տասքիրի Շահանէ խաս-խանէլէրի իլէ ատայ վէ թապուրլա-իչիւն իգթիդա իսէճէք էեղան վէ ատի վէ էսէվատը ճէրահիյէ վէ պայ-արիէ վէ սբէչարիլէնին իթիսաբնա թա-պ օլանլարը մագամը Սէրասքէրի վաղիմաթը ուսմուտիյէ տաիրէսինէ կէլ-լէրի իլան օլունուր։

8 մարտ 1886

2—3

ԻԼԱՆ

ԹԱԶԻՆԵԻ ԹԱՍՍԱՆ ՇԱՀԱՆԷ

Էրզադ անպարը իչիւն ալրնճաղ-ա Մըսրը բերինճի իլէ Բէթիսօ տա-նընին միւնագատասրնա պաշչատ-ղընան, թալիպ օլանլարը բաղար չարշէնպիհ կիւնլերի Խաղինէի Խա-լի Շահանէյէ կէլմէլերի իլան օլուր։

8 մարտ 302

3—3

Ա.ԶԴ

Ժ. Տ. Ծանէթթօյի դրամատունը կը ծա-նուցանէ հասարակութեան թէ յառաջիկայ ապրիլ 1 ին Արքունի Փոստերանոցին մէջ տե-ղի պիտի ունենայ Արեւելեան երկաթուղ-ւոյ արժէթղթոց Բրդ. վիճակահանու-թիւնը։

500 թիւեր պիտի շահին.

ՄԵԾ ԲԱԺԻՆ, 600,000 Ֆրանք.

1	բաժին	60,000	Ֆրանք.
2	»	20,000	սկան »
6	»	6,000	» »
12	»	3,000	» »
18	»	1000	» »
և 450	»	400	» »

Ամբողջ տոմսին գինն է 7 1/2, կէսինը՝ 5 և քառորդինը՝ 3 ղրուշ։

Որպէս զի գնողք շահելու աւելի հաւա-նականութիւն ունին, Դրամատունս ի վա-ճառ հանած է 50 թիւեր ներկայացնող բրոշիւռներ։ Գնողն իրաւունք պիտի ունե-նայ այդ 50 թիւերուն վիճակած բաժին-ներուն մէկ հնգերորդին։ Այդ բրոշիւռներ կը ծախուին 75 ղրշ. սակեղբամ։ Ուրիշ բրոշ-իւռներ, որք նոյն պայմաններով 25 թիւ կը ներկայացնեն, կը ծախուին 37 1/2 ղրշ։

Այս կերպիւ գնողներն, 75 կամ 37 1/2 ղրուշ վճարելով, կրնան ի ձեռին ունենալ 50 կամ 25 թիւ մէկէն, բան մ՚որ յոյժ կա-բեւոր և չհաւէտ է նոյն իսկ ամենէն նի-հար քսակաց համար։

Դրամատունս յաճախ վճարած է իւր յաճախորդաց բաղմաթիւ շահեր զրոս բաղ-դը շնորհեց իւր ծախած թիւերուն։

Ուստի ջերմապէս կը յանձնարարէ ար-դոյ հասարակութեան գնել այդ տոմսերը։

Անոնք որ կը փափաքին օգուտ քաղել այս առիթէն վրդովելու համար իրենց բաղդն, որոն դաղանիքներն անծանօթ են ամե-նուս, պարտին ժամանակին գնել այդ տոմ-սերէն որք կը ծախուին միայն Ժ. Տ. Ծա-նէթթօյի դրամատունն ի Կալաթա։

Գաւառներէն եկած յանձնարարու-թեանց հետ պէտք է զրկել փոխարէն դուս-մարն, հետուն դրամով, պանքատոմսով, չէ-քով, մանդա-Բոստով եւ։

Դիմել առ Ժ. Տ. ԾԱՆԷԹԹՕ

Կալաթա, Գումխսան խան, Թիւ 18

3—20

Ց. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ԿԱԶՄԱՏՈՒՆ

Ի ՊԱՅԾԷԼ ՀԱՍՈՒՔ

ՖԻՆՃԱՆՃԸԼԱՐ ԵՕԳՈՒՆՈՒՆ Կ. ՊՕԼԻՍ

Սոյն կազմատան մէջ ամէն տեսակ դիրք-ներ և տուփարներ կը կազմուին չափաւոր գիներով։ Կազմատունը ունի եւրոպական ընտիր գործիքներ նորագոյն կատարելու-թեամբք շինուած, և կարող է ամեն տե-սակ գիրքեր պատրաստել յոյժ ընտիր և հաստատուն կազմով։

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԽԸՏԻՎԻԷ

ՈՒՂՂԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ Կ. ՊՕԼՍՈՅ ԵՒ ԱԼԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՄԻՋԵՒ

Շաբաթէն չոգենաւը, նաւապետ Բէրէյրա, յառաջիկայ չորեքշաբթի, Մարտ 24, պիտի մեկնի, ժամ 4 ի Տարտանէլ Միտիլի, Պիրէոն և Ալեքսանդրիա, ուր պիտի հասրդ ակցի Սուէհոյ և Կարմիր ծովու գծին հետ։

Խարիվիէ Ընկերութեան չոգենաւ կ. Պոլսէն կը մեկնին ամեն Զորեքշաբթի երեկոյները, Տարտանել, Միտիլի, Իզ-միր և Բիրէա հանդիպելով։

Ալեքսանդրիա կը հասնին Երկու-շաբթի առաւօտները։ Ուղեւորութիւնը կը տեւէ չորս ու կէս օր։

Ուղեւորներուն և ապրանաց համար դիմել Պոլիս, Կասուրլին քով, Վայիտ-Սուլթան խան և կամ Ղալաթիոյ Ֆիւզ. Վայվոտա փողոց, Եռասէֆ Իզզէտտին խան։

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Առաջին կարգի սեղան։ Սենեկապատ կին մը յատկապէս է տեղեանց պահին։ Մանդամայն հա-ւաքանչիւր շաբաթուան մէջ Եւրոպայի բժիշկ մը կը գտնուի։ Առաջին ասիճանի տոմսակք մինչեւ երեք ամիս ընդունելի են, դիւրութիւն ընծայելու հանուր տնտոյ իրենց ճանապարհորդութեան շրջանին մէջ շոգենաւին հանդիպած ո՛և է նաւատեղիան եւ-լով, օրերով ժամանակ անցուցանն և յաջորդ շոգենաւ-ով իրենց ճանապարհութիւնը շարունակել ուզեն։ Առ-նուազն երեք անդամէ բաղկացեալ ընտանեաց տոմ-սակաց վրայ % 10 զեղչ մը կը լինի։ Երեք ու զարձի տոմսակաց վրայ % 10 զեղչ մը կը լինի, և բաց առ-կալ ծալը Ընտանեաց համար այս զեղչն % 15 է։ Երեք ու զարձի տոմսակք մինչեւ վեց ամիս ընդու-նելի են, եթէ Ապրիլի սկիզբէն մինչեւ Յուլիսի ըս-կիզբը գտնուին։ իսկ տարբոյն միւս ամիսներուն մէջ մինչեւ երեք ամիս ընդունելի են։

Մանօթ. — Խարիվիէ ընկերութեան կարմիր ծովու մէջ բանող շոգենաւերն ամեն ուրբաթ Սուէզէն եկնելով, շաբաթը մէկ օնամատ կանգնու։ Հաւ-տէք և Սուպպիմ, և տասնվեհինգ օրն անգամ մը Մի, սոյա, ՀՅՕՏ-յատ և Ամէնի ծովեզերքին մէջ, Թա-նուս, Եյլեա, Պորպարա և Ամէնի նաւահան-գիստները կը հանդիպին։

ԱՆԱՄՆԱՐՈՅԺ ՄԻՆԱՍ ԷՄԻՐԵԱՆ

Զիներու, կոլերու և չանց հիւանդու-թիւնները կը դարմանէ և առ ու ծախի ա-ռաջն նոյն կենդանեաց առողջ կամ հիւան-դոտ լինելն հասկնալուն զգոյշները կը գտնայցնէ։ Պէտք է դիմել Պոլիս Պահճէ-Գարու Մէր-համէթճեան էֆէնտիի դեղարանը, կամ իւր բնակարանը Իւսկիւտար Պաղլարպաշի Սաֆա-պէյ փողոց թիւ 24։

ՀԱՅ ԹԷՅԱՎԱՃԱՌ

Կը վաճառէ ամեն տեսակ ընտիր թէյեր։ Ամեն յաճախորդ որ դիմեն Թահմիզ փողոց թիւ 70 (Մըսրը Զարշըի կից, աղբիւրին վերի կողմը) գոհ պիտի լինին իրենց ստացած թէյերուն թէ՛ տեսակէն և թէ՛ գնէն։

ՔԻՄՄԸՐԻԹԻ ՄՍԵՂԷՆ ԲԷԲԴՈՆ

ՈՒՏԵՍՈՏ ՀԻՒԱՆԴՈՑ ԵՒ ԱՊԱՔԻՆՈՂԱՑ-ՀԱՄԱՐ

Ախորժելի համ և հոտ ունի, դիւրաւ կը լուծուի և մանաւանդ ա-մենադրու դարման է ստամոքսի տկարութենէ նեղուող հիւանդաց համար։

ՊԱՏՐՈՆ Վ. ԿՈՅՍԱԳԻՐ. Ոսկեայ միտալ 1885 ի Անվերսայի համաշխար-հային Ցուցահանդէսին մէջ։

Կը ծախուի գլխաւոր դեղարանները

Բերա, Բրիտանական դեղարան — Պոլիս, Վ. Ծանոնի դեղարան
» Ֆրանսական » — » Քիւչիւքեան եղբ. »

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

ՐԻԼԱՅԸՆՍ

Ծովային ապահովագրութիւն։ —Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուիթոլ, Ուիթոլ խան Պահչէ-գարու, Պոլիս. կամ Ղալաթիա սպէքսիոտի խան թիւ 20։ 507

ԸՆՏԱՆԵԱՅ ԵՒ ԱՐՀԵՍՏԻՑ ՀԱՄԱՐ

ՍԻՆԿԻՐ

ՃՇՄԱՐԻՏ ԵՒ Լ.ԱՒԱԳՈՅՆ

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅՆԵՐԸ

ԿԸ ԳՏՆՈՒԻՆ ՄԻԱՅՆ

ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ՄԹԵՐԱՆՈՅՆԵՐԸ

THE SINGER MFG. CO. N. Y. TRADE MARK

Ղալաթիա, Կավանի խան, 2
Պոլիս, Մահմուտ բաշա, 90
Բերա, Մեծ փողոց, 208

Ներկայացուցչի Թուղթերոյ համար Կ. ՆԻԷՏԼԻՆԿԷՐ

ՉԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾԵՐԷՆ

Ամեն ճշմարիտ մեքենայ կը կրէ թեւին վրայ Singer Manufacturing Company և վրան՝ Գործարանին նշանը։

ՉՐԻ ԱՇԿԵՐՏՈՒԹԻՒՆ—ՉԱՓԱՒՈՐ ԳՆԵՐ

ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՎՃԱՐՄԱՆ

ՆԻՔՕՍԻՏ, ԴԵՂԹԱՓ ԸՆԴԴԷՄ ԾԽԱԽՈՏԻ

(ՇԱԲԱՐՈՎ, ՊԱՏԱԹ)

ՀԷՅՏՈՔԻ

ՆՈՐ ՓԱՅԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐ

Աւասիկ ընդհանուր բժշկութեան զարմանալի և արտակարգ գիւտ մը։ Գիտութեան յաղթանակ-ները —Եղեկտրական Հեռագիրը, Շոգի, Տպագրութիւն— յեղափոխեցին երկրագնդիս դրութիւնը, և մարդկային կեանքն ըրին լաւագոյն և իմաստնագոյն։ Այսպէս, թէպէտ անհնար դեղահատներ կան հիւանդութեանց համար, և մեծ արժանիք վերագրելով հանդերձ անոնց, Տոքթոր Հէյտոքի գիւտը նեսմացուցած է անոնց ամենն և հիմնած է

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՈՐ ԴՈՒՌԻԹԻՒՆ ՄԸ

Բժիշկք, որոց պատուիրած օրական չորս կամ հինգ դեղահատները կը տկարացնեն ստամոքսը եւ կ'անդամալուծեն ուղիները, պիտի կրնան իրենց հիւանդաց առողջութիւն և սխորժակ տալ այս արտակարգ դեղահատներէն մէկ երկուքով։ ՏՈՔԹՈՐ ՀԷՅՏՈՔԻ ՆՈՐ ՓԱՅԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐԷՆ մէկ երկուս հատ կը բաւեն դնելու համար ստամոքսն կատարեալ կանոնաւորութեան և սխորժակի մէջ, և մեղմն պայծառաւորելու։ Եթէ փայծեղնը տկարացած է իւր գործին մէջ, կը կաղ-գուրի, և եթէ Զղային դրութիւնը խանգարուած է, կը վերականգնի։

ՄԱՂԶՈՒՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԵՐ

1. Ստամոքսի ծանրութիւն,
2. Աղեաց տարաձգումն գիշերի պատճառաւ։
3. Դրսացաւութիւն,
4. Ճաշէն յետոյ տկարութիւն և յոգնութիւն։
5. Բերանն մէջ գեշ հոտ մը և ծանր լեզու։
6. Որովայնի ալդոութիւն, մերթ ընդ մերթ ալ փորհարութիւն։
7. Գլխու ցաւ. ճակատի վրայ։
8. Սխորժակի պակասութիւն և մեծ յոգնութիւն։

Վերոյիշեալ ամեն նշանները բաղդատաբար ցոյց կուտան թէ խանգարում մ՚յառաջ եկած է փայծեղնի մէջ, եւ որ լինի ամենիկան և ազդու դարման մը ընդդէմ մուդհատութեան։ Մեծ հաւատ չունիմ՚ լուծողա-կան դեղերու վրայ, ուստի եւ շինեցի դեղահատ մը որ զորաւոր եւ ազդու դարման մ՚է, եւ կոչեցի

ՀԷՅՏՈՔԻ ՆՈՐ ՓԱՅԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏ

Առողջութեան իսկութիւնն իսկ են, եւ այն մեծագոյն շնորհն զոր Գիտութիւնն ըրած է մարդկութեան։

Զարմանալի՜ թեան, Աղեղորութեան, Ընդհանուր յոգնութեան, սխորժակի պակասութեան, Գլխացաւութեան համար, Տոքթոր Հէյտոքի Նոր Փայծեղնի դեղահատերն ամենազգու դարման են։

Մեն մի սրուակ կը պարունակէ քսան դեղահատ։ Կը ծախուի ամեն դեղավաճառաց քով։

Տարակուսող անձինք կրնան, փորձի համար, ՉՐԻԱԲԱՐ ստանալ այս դեղահատներէն սրուակ մը, եթէ մեզ գրկին իրենց անուն եւ հասցէն։

Թղթատարական տոմս մը զրկել «Փայծեղնն եւ իւր գաղտնիքը» խորագրով տեսարկին։ Հարկ եղած տեղեկութիւնները կը տրուի ամենուն։

ՀԷՅՏՈՔ ԵՒ ԸՆԿ.
Նիւ-Եորք, Մ. Ն.

Կը ծախուի Իզմայիլիա, Գասթօրիտէսի դեղարանը, ի Պոլիս Քիւչիւքեան դեղավաճառանոցն և Նիկոլէն։

ԶԳՈՒՇԱՒՈՐՈՒԹԻՒՆ.—Կը խնդրուի դեղավաճառներէն ուշադրութիւն դնել, որ Ճ. Է. Ֆրանսիսի, որ միայն Գործակատարն է, տարագրութիւնը գրուած լինի։ Հակառակ պարագայի մէջ, դեղահատները կեղծ են։



ԱՑԷՐԻ ԶԷՐԲԻ ՓԷՔԹՈՐԱՆ

Այէրի Զէրբի Փէքթորան արագագէս կը բուժէ հարբուղները, հազերը, կոկորդի վէրքը, փողցաւը, բորբոքումն հնդա-գի, բորբոքումն ընչափողի, ընչարգելու-թիւն եւ։

Այս դեղը հրաշալի կերպիւ կը զօրացնէ տկար թոքերը, կը հանդարտեցնէ թոքային դրգռումները, և կապուտ հազի և յառաջացեալ թոքախտի համար միակ դարմանն է, որ հզօրապէս կոփոփէ ու կը կապդուրէ։

Այէրի Զէրբի Փէքթորան՝ որ այնքան մեծ համբաւ ստացած է իբրեւ ամենէն հը-զօրագոյն դարման զոր գիտութիւնն ի լոյս ընծայեց, շնորհիւ նորա կոկորդի և թոքա-յին տկարութեանց վերայ ունեցած ուժգին և միօրնակ նուաճող ազդեցութեամբն է, որով միանգամայն իւր առաքինութեանց ջատագովն և պաշտպանը կը հանդիսանայ։

Զկայ դեղ մի որ կրնայ այնքան կարե-ւոր լինել հիւանդին քան զայս, և կամ ա-ւելի արժանիք ունենայ նորա կատարեալ վստահութիւնը գրաւելու։

Զէրբի Փէքթորան ընտանեկան գործա-ծութեան համար եղած ուրիշ դեղերէ գե-րազանցն է և հաւէտ, քանց չատ հաճելի լինելով փոքր տղայք չատ դիւրաւ կ'առ-նուն։ Կեդրոնատեղին է Ս. Մ. ՄԻՆԱՍԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՔՑ. ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԱՃԱՌԱ-ՏՈՒՆՆ, ի Ղալաթիա Կոստանդնուպոլոյ։

Նաեւ կը ծախուի քաղաքիս մէջ այլ և այլ դեղադրօծաց քով։

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լէվանտ և Մէրիտերական գծեր— բանող ընդհանուր

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Գրանդուս	4200	Օսարիս	3000
Ֆերոս	4000	Նէբթիս	3000
Օսմանի	4000	Բերա	3000
Սեւոսգրիս	3250	Ադլանդիք	1700
Թրոյ	3250	Լօգիւս	800
Մակեդոնիա	3250	Օրիոնա	800
Մարիոթիս	3250	Սէուիլ	700
Սգիրքս	3000		

Սեւոսդրիս չոգենաւը, նաւապետ Լաքեան, ամսոյս 22 ին ուղղակի Լիվրբուլ պիտի երթայ։

Սգիրա չոգենաւը, նաւապետ Գրուք, ամսոյս դէպի 25 ին սատ Կոստասի ընդհանուր վաճառքով։

Դիմել առ Ժ. Թ. ՈՒԻԹՈԼ և ԸՆԿ.
Մէյտանլըգ փողոց,
Ուիթոլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ
513 31, Ճէյմս Սդրիդ, Լիվրբուլ

ԲԱԲԱԵԱՆԻ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լէվանտ, Մէրիտերական և Օդեսայի գծեր

կանոնաւորապէս բանող

Անուանք	Թոնոյ	Նաւապետք
Այա Սոֆիա	3,000	Պէքօ
Աքարատ	2,500	Թոմբրա
Աքարատիա	2,500	Քրուխշանք
Լազարիա	2,500	Ուիլքս
Մասէտոնիա	3,500	Մարշ
Բուլգիրիա	2,800	Թոմբրոնի

Բալ չոգենաւը, նաւապետ Ուսսթինիդը, փետրուար 12 ին Պաթումէն սատ դառնալով Լիվրբուլ պիտի ուղեւորի։

Աբրամ չոգենաւը, փետրուար 7 ին Լիվրբուլէն սատ կ'սպասուի։

Ընկերութիւնն օրինաւոր գներով վա-ճառք կընդունի Եւրոպական երկիրներու և Ամերիկայի համար։

Ամեն դիւրութիւն և հանդատութիւն կը տրուին ուղեւորաց։

Դիմել առ ԴԱՆԻԷԼ ԲՈԲԱ ԵՒ ԸՆԿ.
513 Գործակալք

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՌԷԱՆ

Ն. ԲԱՔԻ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիա և Բոթիլ գծեր— կանոնաւորապէս բանող

Սամսոն, Տրապիզոն և Պաթում երթալիք յառաջիկայ չոգենաւն է Լիմէնէ, որ մարտ 10 ին Մարսիլիայէն և մարտ 17 ին Պոլսէն պիտի մեկնի։

Մարսիլիա երթալիք յառաջիկայ չոգենաւն է Մէհլիէլ, որ պիտի մեկնի վաղը, շաբաթաբաթի ժամ 4 ին։

Ռոզարիոյ և արտ ուղեւորութիւն

Նաւագէնքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՆԻՈՒԹ ԲՐՈՒՈՒԼ
Թիւ 17-18 Քիւչիւք Միլլէթ
514 Մոմհանէ փողոց, Թիւ 141

ՔԻԻՆԱՐՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Ոգի ածելու ելանի ՀՅԷԼՖՕՈՒԼԻ և Մէնչեսթէրլանի գծեր.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ագլաս	3,000	Մալթա	3,000
Աչէբօ	3,000	Մորաքօ	2,500
Պալտէք	2,500	Նանթ	2,500
Պրիթիշ Քուին	1,200	Բալտիրա	3,000
Շերզուրկ	2,000	Սֆագիա	4,600
Տէվերարա	2,500	Ցարսկօսա	3,000
Կալիա	4,000	Ցամբիա	3,000
Քէնար	2,500	Թրինիտատ	2,500

Թէնդրաա չոգենաւը, նաւապետ Ճոնէս, ամսոյս 24 ին ուղղակի Լիվրբուլ պիտի երթայ։

Դիմել առ ԹՈՄԱՍ Զ. ՃՈՒԼԻ
Գործակալք
Թիւ 1 Քիւչիւք Հաթիլ
511 փաշա խան Ղալաթա

ՖՐԷՏ. ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Ոգի կանոնաւորապէս կը բանին ԼԻՎԷՐՓՈՒԼԻ և Մաթեւլէյ գծեր.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալճէրիան	2500	Ցաուսնեան	3700
Ալզատիան	2500	Ցլասգոեան	3700
Անտալուզեան	2500	Ցլասկեան	3700
Անթէնեան	2500	Իպերիան	5500
Ադաիան	3700	Իսպիրիան	5500
Զավարիան	6000	Լոգրիան	5500
Գուլֆարիան	6000	Լէսպեան	2200
Գասթիլեան	800	Լիկուրեան	2500
Սայրենեան	2000	Լէսպոն	800
Տուրոյ	700	Օրոթոյ	700
Լիմիշլեն	3700	Բերսիան	3800
Ցապիան	3700	Վալենսիան	6800
Ցալէրնիան	3700	Վիրճինեան	6800

Ռոզարիոյ համար ամեն դիւրութիւն

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ
ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆԹԷՆ
Գործակալ
Թիւ 34, 35, 36, Եէնի Միւլէթ խան, Ղալաթիա.

Նաւատեարք, Պարոնայք Ֆրէտ, Լէյլանտ և ընկ. Լիվրբուլ

Գործակալներ՝
Կ. Պոլիս, Իսուարտ Լաֆոնդէն.
Զմիւռնիա, Պ. Պ. Քարվըր Եղբարք
Ալեքսանդրիա, Կ. Լ. Վահան և ընկ.
Մալտա, Ա. Քամիլիրի.
Նիրա, Ա. Մ. Մավրոկորտատոյ.
Զմիւռնիա, Փ. Ուիդոլ և ընկ.
512



ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒԹ

Ընդ Հէ Անգլիա, Կ. Պոլսոյ և Օդեսայի

ԹՈՎՄԱՍ ՈՒԻԼՍՐԸՆ ՈՐԴԻՒՔ ԵՒ ԸՆԿ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Այպանս	2,000	Լէգանդօ	4,500
Անձէլս	3,000	Մարենկօ	4,300
Աչիս	1,300	Պարատոն	2,500
Պասսանս	3,500	Մէլս	2,000
Պրոսպերոս	2,200	Նէրս	2,000
Պրամս	2,000	Օթելլս	5,000
Դէլֆս	2,600	Օրանսս	3,000
Գալիբս	2,500	Դրանգս	4,500
Գամէս	2,400	Դէդս	2,000
Գաբէ	2,000	Բասիքիք	1,200
Գասս	2,700	Բալերմս	3,200
Տիտս	2,500	Բաբէր	1,700
Տօմինս	1,800	Քէդս	2,800
Էրաքս	2,600	Ռիսթս	4,400
Տրաքս	2,600	Ռիսալսս	3,200
Ֆալքան	800	Ռոյլս	3,000
Ֆիտս	1,700	Ռոմանս	5,500
Ֆլամինիս	1,600	Ռամէս	3,500
Կալիէս	5,500	Սալէրնս	4,000
Կիդանս	2,200	Սաֆիս	2,000
Կոզս	1,800	Սիլվիս	2,000
Կրօսնս	2,200	Սորենգս	4,300
Հանկս		Թասսս	1,200
Հերս	2,000	Թ. Ուիլսըն	3,000
Հիտալկս	3,000	Թրիկեր	1,300
Հիմալեդ	1,200	Թօրեսս	2,800
Ճիսս	2,300	Քանդս	3,600
Քէրս	2,000	Եէտսս	1600
Քօնս	2,200	Զէպրա	3,000
Լէս	2,000	Զէրս	41,0

Մասնիս չոգենաւը, նաւապետ Միչէլ, ընդհանուր վաճառքով Հալլէն սատ հասած պարպած և Օսէսա ուղեւորած է։

Բիանս չոգենաւը, նաւապետ Նիւմէն, ընդհանուր վաճառքով Հալլէն մեկնած է ամսոյս 1ին և 13ին սատ կոպասուի։

Ռոզարիոյ համար ամեն դիւրութիւններ

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ
ՖՐԷՏԵՐԻՔ ՀԻԼՏ ԵՒ ԸՆԿ.
Գործակալք
Թիւ 17-18, Քիւչիւք Միլլէթ
514 Խան Ղալաթիա

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ